



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Ltn  
1772



1999



Չ. ԱՏԱԳՈՎՈՒԹԻՒՆ

# ՀԱՄԱՕԳԵԱՑ ԲՆԱԵՐՈՒԹԵԱՆ

ՃՇՄԱՐՏԱԽՕՍ ԱՆՁԻ ՄԸ

Գ Ր Ո Ւ Ա Ճ

7921



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ


Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

1851 == Թ Յ





Հ Ա Մ Ա Ռ Գ Ի Ե Ա Ց Բ Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն



**Ա**ՋԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ պարտքը սրտերնուս ու մտքերնուս մէջ հաստատ ու անջնջելի կերպով մը տպաւորեալ ըլլալով, չէինք կրնար անտարբեր կենալ, և անդուլ մտադրութիւն մը չքննել աս վերջին տարիներս ազգին մէջ պատահած զանազան դիպուածները, որոնցմով ազգին հանդարտութիւնը վրդովելով, և իր գործողութեանց ընթացքը դրեթէ դադրելով մինչեւ ցայսօր անորոշ վիճակի մը մէջ կը ծփայ ու կը տատանի :

Այն ամենայն դէպքերը որոնց վրայ հասարակօրէն թեթեւ դատողութիւն մը կ'ըլլար, մենք մեր բանականութեան դատումը ուղղապէս կշռելով, ճշմարտութիւնը որ կողմը որ հակէր, այն կողմը ընդունելով, իրաւամբ պաշտպանելու կը ջանայինք :

Այս դէպքերուն պիտո երեւելիներէն մէկն ալ 1846 տարուան մէջ Համազգեաց անունով ընկերութեան մը հաստատուիլը եղաւ, որուն վրայօք ազգին մէջ հինգ տարիէ ետեւ անբաւ խօսակցութիւններ եղած, և այս վերջին ժամանակներս, զանազան գրուածքներ ալ հրատարակած ըլլալը լսեցինք ու տեսանք : Ի այց որչափ ցաւալի տպաւորութիւն ըրաւ մեր սրտին այսպիսի գրուածները, երբ ճշդիւ քննելով տեսանք որ ամէնն ալ թեթեւ դատողութիւն մը ըրած էին վերոյգրեալ ընկերութեան բուն նպատակին վրայ, որով իրենց զանազան առարկութիւնները ընթերցողներուն միտքը չհամոզելէն ետեւ կարծեմ թէ առաւելապէս շփոթած էին, որչափ որ ճշմարտապէս անձինքներէն ալ գրուած ըլլան. ուստի պարտ և պատշաճ համարեցանք այս նիւթին վրայօք հիմնական ու ստոյգ տեղեկութիւններ տալ մեր ազգայնոց, որպէս զի ամէն պարագայները գիտնալով, և նիւթին ծանրութիւնը աղէկ կշռելով, կարենան

1267

4 1772 - 60  
28 1778

ուղիղ ու ճշմարիտ դատում մը ընել այս կարեւոր խնդրոյն վրայօր :

Մարդկային ազգին ընդհանուր պատմութեանը ակնարկու-  
թիւն մը ընելով կը տեսնենք որ իր սկիզբէն մինչեւ ցայսօր՝ թէ-  
պէտ ամէն կերպ արկածներու ենթակայ եղած է, ՚ի վերայ այսր  
ամենայնի այս ընդհանուր փոփոխութեանց տակը չի վհատելով,  
միշտ յառաջ գացեր, ծաւալեր, ու պայծառացեր, և դարուց  
՚ի դարս իբրեւ քայլ առ քայլ դէպ ՚ի իրեն կատարելութեանը  
դիմեր է : Այց հազար տարուան պատմութիւնը կը հաստատէ  
միանգամայն, որ մարդկային ազգին աս մեծ յառաջադիմու-  
թիւնը մէկ ժամանակ և մէկ մարդու մը գործ չըլլալով, մանա-  
ւանդ մեծ և փոքր ամէն մարդու իրեն կարողութեան չափովը  
անոր զարգացման ձեռնտուութիւն ընելէն յառաջ եկած է :  
Ասանկով միշտ ետքէն եկողները առջիններուն, ու ապագայն  
անցեալներուն վրայ, հետզհետէ իրենց գիւտերը, ճարտարու-  
թիւնը, փորձը ու աշխատութիւնը եւելցնելով, մարդկութե-  
աւանդը ազգատոհմէ ազգատոհմ, զարդարեր, պերճացուցեր  
ու ազնուացուցեր են, և ասանկ ալ պիտի շարունակուի մինչեւ  
՚ի վերջ ժամանակաց :

Անհնարին բան է, որ մեր ազգն ալ, այսինքն մարդկային ազ-  
գին մէկ մասը, այս ընդհանուր ու կեդրոնական շարժմանէն ու  
ձգողութենէն դուրս մնայ . վասնզի միշտ կրթեալ ազգաց հետ  
հաղորդակցութե մէջ ըլլալով, կամ անոնց հետ պիտի հաւասա-  
րաքայլ յառաջ երթայ՝ և կամ ետ մնալով անոնց բնական ու բա-  
րոյական ազդեցութեան, ու գովութեան կամ անարգանացը են-  
թակայ ըլլայ : Ասան զի յայտնի է որ տգիտութեամբ ու անկրթ-  
ութեամբ իր բնական ազնուութենէն հեռացած մարդը, գի-  
տութեամբ ու կրթութեամբ կատարելութիւն ստացած մար-  
դու հետ բնաւ չի կրնար հաւասարիլ : Բայց այս յառաջադի-  
մութեան պարտաւորութիւնը առաւել վերջի ատեններս ծան-  
րացած կ'երեւի մեր վրայ . այսինքն բարձրագոյն դռնէն ինքնագը-  
լուխ ազգի արտօնութիւն ստանալէն ետեւ . ուստի մեր ազգա-  
սիրութիւնը չէր կրնար ներել մեզի, ազգին յառաջադիմութե  
վերաբերեալ նիւթերուն մէջ այլ եւս անտարբեր կենալ, մա-  
նաւանդ գիտնալով որ ներկայ ու ապագային մեղադրանքը ալ  
բոլորովին մեր վրայ պիտի խնար :

Ասանկով թէ որ ազգին յառաջադիմութեանը իր կարողու-  
թեան չափովը օգնական ու ձեռնտու ըլլալը, մեծ և պզտիկ ա-

մէնուն բնական ու մարդկութեան պարտք մըն է, եւս առաւել այսպիսի օգնականութեան համար ընկերութիւն մը հաստատելը, որով առաւել եւս կանոնաւոր ու զգալի կերպով ազգին բարերարութիւն կրնայ ըլլալ՝ ազգասիրական պարտք, ու գովելի ձեռնարկութիւն մը պիտի համարուի :

Գիտութեանց, արուեստից, ու վաճառականութեան և ուրիշ ամէն կերպ կենցաղօգուտ ձեռնարկութեանց, ընկերութեան կարեւորութիւնը ու նպատար, և պիտո երեւելի ու օգտակար գործողութիւններուն աշխրբիս ամէն կողմը անոր միջոցովը կատարուիլը, այնչափ յայտնի ու աշխարհածանօթ, և մեծին պրզտիկին հասկըցած բանն է որ, հոս տեղը նորէն ապացուցով հաստատելը բոլորովին աւելորդ է : Մանաւանդ թէ ընկերութեան այս մեծ օգուտը ու յարգը կատարելապէս ճանչնալով ու աղէկ գիտնալովն է որ ասկէ հինգ տարի յառաջ զանազան ազնուախոհ ու ազգասէր անձինք, մէկ տեղ գալով, ազգին մէջ հաստատեցին վերոգրեալ Համազգեաց ընկերութիւնը, որուն նպատակըն է՝ « Ազգին ուսումնական կերպով բարիք ընել » և այլն, ( տե՛ս կանոն Ա. ) :

Բայց այս ազգասիրական ձեռնարկութիւնը ինչպէս ըսինք, ոմանց առջին վնասակար նորաձեւութիւն մը երեւցաւ : Ասու մը ու գիտութիւնը մինչեւ այս վերջին ժամանակները միայն եկեղեցականաց յատկացեալ բան մը ենթադրուելով, աշխարհականաց իրենց ուսումնական կրթութիւնը եւ վելլըրները արդեօք եկեղեցականաց վախ մի տուաւ՝ իբրեւ իրենց սեփական իրաւանցը յափշտակութիւն : Ազգը խնամել, ազգին բարիք ընելը նմանապէս մեծամեծաց վերաբերեալ բան մը երեւնալուն, ընկերութեան մըն ալ այս կերպ բարերարութեանց խառնուիլը, մեծամեծաց կասկած մի տուաւ՝ իբրեւ իրենց փառացը աղօտութիւն : Աղորմութիւնը ու ազգասիրութիւնը ամէն մարդուն յայտնի կամ ծածուկ գործադրելու առաքինութիւնները ըլլալով, ասանկ մասնաւոր կերպով այսինքն ընկերութեամբ մը կատարելը, ժողովրդեան մէկ մասին դժուար մի եկաւ՝ իբրեւ իրենց ազգասիրութեան մթութիւն, չենք գիտեր, բայց աս յայտնի է որ Համազգեաց ընկերութեան իր հաստատուած օրէն, առանց ինչ ըլլալը աղէկ մը հասկցուելէն և առանց իր պտուղը յայտնապէս տեսնուելէն, ազգին աս իրեք մասէն ալ, այսինքն թէ եկեղեցական ու թէ աշխարհական մեծամեծներէն և թէ

ժողովրդեան մէջէն ասոր դէմ ելլողներ եղան : Ամէն տեղ իբրեւ  
մնասակար ու անկրօն ձեռնարկութիւն մը քարոզեցին , պարսա-  
ւեցին , ու իր սկզբնաւորութեան ժամանակը շատ կերպով կոր-  
ծանելու ջանացին : Ասանկով ծագեցաւ ազգին մէջ խռովութիւն  
մը , որ մինչեւ ցայժմ տեւելէն ետեւ մարդ չի գիտէր երբ պի-  
տի վերջանայ :

Ի՞նչ ըրաւ ընկերութիւնը իր սկզբանէն մինչեւ հիմայ . կամ  
թէ իր վրայ ասանկ թշնամութիւն մը ու գէշ կասկած մը հրա-  
ւիրելու ինչ պատճառ տուաւ . քննենք առանց կողմնակալութե :

Այս և յառաջ 1846 մարտի 16 ին , « Յայտարար նախակրթ-  
թութիւն ընկերութեան Համազգեաց » անունով , գրաբար ու  
տաճկերէն գրուածք մը հրատարակուեցաւ , որուն 76 համազ-  
գի ազգասէր պարոնայք ստորագրեր էին : Աս յայտարարութիւ-  
նով ընկերութեան ինչ վախճանաւ հաստատուած ըլլալը ազգին  
ծանուցանելով , ՚ի սկզբանէ մինչեւ վերջը ընկերութեան ինչ  
բաներու ձեռք զարնելը , տասը գլուխ բովանդակուած է , որն որ  
աշխարհաբարի թարգմանելով կը դնենք հոս :

- Ա . « Միասիրտ ու միակամ խաղաղասիրութեամբ միաբանիլ :
- Բ . « Օգտակար գրքեր շարագրել ու թարգմանել , և տը  
պագրութեամբ հրատարակել :
- Գ . « Քաղաքները ու գեղերը մանչ ու՛ աղջիկ մանկանց կրթ-  
թութեանը համար դպրատուններ ու վարժարաններ  
կանգնել :
- Դ . « Երկրագործութեան արուեստին ուսումը ու գործա-  
գրութիւնը :
- Ե . « Մեր հայրենի հնութիւններուն ու սովորութիւններուն  
տեղեկութիւն ու քննութիւնը :
- Զ . « Ասիանեաց գրքերուն , դրամներուն , ու ուրիշ հնու-  
թեանց մնացուածներուն հաւաքումը :
- Է . « Բնական պատմութեան , կենդանեաց , բուսոց և երկ-  
րի տակ եղած նիւթերուն հաւաքումը :
- Ը . « Օ՛աղկեալ ազգաց մէջ գտնուած արուեստներուն ու-  
սումը :

Թ . « Եւրոպացւոց պէս վաճառականութիւնը ծաղկեցընելը :

Ժ . « Հանքաբանական գիտութեանց կատարեալ ուսումը » :

Աս տասը հատուածը գրելէն ետեւ , « Արովհետեւ ասոնց  
ամէնուն մէկէն ձեռք զարնելը անկարելի է « կ'ըսէ նոյն յայ-

տարարութիւնը անոր համար ընկերութեան առաջին գործքը պիտի ըլլայ, կարեւոր գիրքեր շարագրել ու թարգմանել տալ, երկրորդ վաճառականութեան հաստատուն հիմ մը ձգել, ու երրորդ մանչ ու աղջիկ մանկանց կրթութեանը համար կանգնուելու վարժարաններուն պատրաստութիւնը տեսնալ: Հոս կը հարցընենք ոչ միայն ճշմարտասէր ուղղափառ հայոց մը, այլ ամենայն ճշմարտասէր ուղղափառ հայերուն կամ ուրիշ ազգերուն, այս տասը հատուածին մէջ ի՞նչ կը գտնան ճշմարտասիրութեան, ուղղափառութեան, ու հռովմէական դաւանութեան դէմ, մեզի ցուցունեն: Սենք նոյն ճշմարտասիրութեամբ, ուղղափառութեամբ, ու ճիշդ մտադրութեամբ քննելով միայն աս զարմանալու արժանի բանը գտանք թէ, ի՞նչպէս ճշմարտասէր ու ուղղափառ ազգային մը կրնայ ասանկ օգտակար ընկերութեան մը դէմ կենալ ու անոր խափանմանը աշխատիլ: Ի վերայ այսր ամենայնի կը պարտաւորինք մեծ ցաւով ու դաւանութեամբ խոստովանելու, որ տասնըիններորդ դարու մէջ ազգին մէջ եկեղեցական ու աշխարհական անձինք կրցան ասոր դէմ ելլալ, և ցաւերնիս այնչափ մեծ է, որչափ որ դիտելու ըլլանք որ այս դիմակացութիւնը գրեթէ ընկերութեան հետ մէկ տեղ սկսաւ այսինքն առանց ինչ կերպ գործելը, և ինչ վախճան ունենալը գիտցուելու որով կը տեսնուի որ գաղտնի ու գրգռիչ պատճառ մը կայ այս կերպ նորաձեւ ու անահնկալ դիմակալութեան:

Հոս կը պարտաւորինք, թէպէտ և ահամայ, ցաւալի ճշմարտութիւն մը յայտնելու մեր ընթերցողներուն, որն որ անկարելի է ծածկելը Համազգեաց ընկերութեան իրաւանցը պաշտպանութեանը համար: Ազգի մը մէջ մինչեւ որ սէր և միութիւն չըլլայ, անկարելի է որ այն ազգը յառաջ երթայ, ասոր վրայ ոչ ոք կը տարակուսի: Ազգի մը մէջ միութիւն պահողը գլխաւորաբար իր կրօնին, լեզուին, իր ազգային յօժարութիւններուն, բարուցը, ու սովորութեանցը միակերպ ըլլալն է: Այսպիսի միակերպութիւնը մեր ազգին մէջը տակաւին կատարեալ չէ, ուրովհետեւ զանազան դաւաններու բնակիչներէն բաղկացած ըլլալուն, բարուց ու սովորութեանց ու լեզուի մէջ մեծ տարբերութիւն կայ. բայց քիչ մը ջանքով ու յօժարութեամբ ասոնք ամէնը միաբանելը խիստ դիւրին բան էր, թէ որ նոյն տարածայնութիւնը մեր հոգեւոր հովիւներուն, այսինքն մեր քահա-

նայից մէջ ալ գոնէ խիստ յայտնի ու երեւելի կերպով մը չի գրու-  
 նուեր : Այս է աւասիկ այն ցաւալի ճշմարտութիւնը , այն ար-  
 տասուելի ստուգութիւնը , որուն հետեւանքը խոստովի դառ-  
 նութեամբ օր ըստ օրէ կը ծանրանայ ազգին վրայ : Ախթէ մարդ-  
 կայ ազգին մէջ որ այս աղէտալի անջատութեան անտեղեակ ըլ-  
 լայ . մարդ կայ որ քահանայից այս կամ այն կողման վերաբերիլը  
 չի գիտնայ . մարդ կայ որ մէկ կողմին միւս կողման վրայ դրած  
 արատ ու պակասութիւնները չի լսած ըլլայ . ինչ դժուարին վի-  
 ճակ է մտածելը ու երեւակայելը , որ այն անձիքը որ քրիստո-  
 նէական սիրոյն ու միութեանը գաղափար ու օրինակ պիտի ըլլայ-  
 ին ազգին մէջ , մանաւանդ գժտութեան առիթ մը եղած են  
 իրենց անմիաբանութեամբը : Ի այց այս երկպառակութեան տը-  
 խուր հետեւանքը մասնաւոր կերպով մը Համազգեաց ընկերու-  
 թեան վրայ ալ ծանրացած ըլլալուն , կը պարտաւորինք մեծ ցա-  
 ւով ու դառնութեամբ սրտի յայտնելու : Ասան զի նախ նոյն ըն-  
 կերութիւնը վերոյգրեալ յայտարարութենէն անմիջապէս ետքը  
 իր կանոններն ալ հրատարակելու պարտաւորելով , այսպիսի նիւ-  
 թոց մէջ տեղեակ համարած քանի մը եկեղեցականաց ալ ան-  
 տարբերաբար խորհուրդ հարցուցած էր , բայց ասոնց մէկ կող-  
 ման մը վերաբերիլը , միւս կողման տժգոհութիւնը հրաւիրած  
 էր , թէ իրենց և թէ խորհուրդնին տուած ընկերութեանը վը-  
 րայ : Արկրորդ՝ ընկերութեան անդամակիցները օրէ օր եւելնա-  
 լով , ու իր ժողովքները առանձին տունները գործադրելը անհը-  
 նարին ըլլալով , ընկերութիւնը քանի մը անգամ ժողովք ըրաւ  
 Աննետիկի յարգոյ Ախթարեանց դպրատան սրահին մէջը , և  
 ասկից միւս կողման կասկածը եւելցաւ , և իրենց հեղինակու-  
 թիւնը ու ազդեցութիւնը ազգին մէջէն պակսեցրնող առիթ մը  
 համարուեցաւ : Ասանկով սկսաւ ընկերութեան դէմ ատելու-  
 թիւն մը , որ բնականաբար եկեղեցականներէն ժողովրդեան անց-  
 նելով , այնչափ վէճերու , խօսակցութեանց , ու ներհակութեց  
 պատճառ տուաւ , որն որ ամէնուն յայտնի ըլլալուն , այսչափով  
 կը բաւականանանք և կը շարունակենք ընկերութեան պատմու-  
 թեան ընթացքը :

Ընկերութիւնը կանոնաւոր կերպով մը յառաջ երթալու համար  
 իր կանոնները լրմնցնելէն ետեւ , անոր մէկ օրինակը քանի մը  
 պաշտօնատէրները , Վերա . Հասունեան՝ Նախագահ և Պատրիարք  
 Հօրը ներկայացուցին իրեն հայրական ակնարկութիւնը խնդրե-

լով. Բայց քանի մը օրէն ետքը Նախագահ Հայրը այս կերպ պատասխանեց ընկերութեան պաշտօնատէրներուն : « Ար այս ընկերութիւնը անգլուխ ձեռնարկութի մը ըլլալով, ու ազգին մէջ տէրութեան, կրօնի, ու ազգին վերաբերեալ գործքերը, բացարձակապէս իր անձին յանձնուած ըլլալով, կը կամի որ, ընկերութիւնը իր ժողովքին մէջ բան մը սահմանելու որ ըլլայ, գործադրուելէն յառաջ իրեն հարցուի, և հաւանութիւն տուածը գործադրուի, և չտուածը և ոչ քուէի անդամ որոշմանը յանձնուի ընկերութեան մէջ : Նախ պէտք է որ ընկերութիւնը ասիկայ ընդունի կատարելապէս, իսկ կանոններուն ակնարկութիւնը ետքի բան է » : Այս կերպ պատասխանը արդարեւ ուրիշ բան չի յայտնէր բայց եթէ ընկերութեան վրայ իր բուն կանոններէն վեր իշխանութիւն մը պահանջել : Աշխարհիս մէջ գտնուած ընկերութիւններէն, երեւելի անձի մը պաշտպանութեան ու խորհրդատուութեան տակ եղած ընկերութիւններ շատ կան, բայց կանոններէն վեր հեղինակութիւն ունեցող գլխու մը տակ եղող ընկերութիւն մը ոչ գիտենք, և ոչ ալ կրնանք երեւակայել : Արովհետեւ ընկերութիւնը հաւասարութեան վրայ հիմնած միաբանութիւն մը ըլլալուն, իր գլուխը իրեն կանոնն է, և անոր պահպանութիւնը ու գործադրութիւնը մասնաւոր պաշտօնատէրներու յանձնուած է, որոնք գլխաւորութեան պաշտօնը վարելով միանգամայն կանոնին հնազանդելու պարտաւորութեան ենթակայ են միւս անդամակիցներուն հետ, ուրիշ բան է քաղաքական կառավարութեան ու շահրութեանը տակ ըլլալը, որն որ ամէն տեղի օրինացը համաձայն է : Աստի Նախագահ Հօրը ասանկ անընդունելի պայման մը առաջարկելը, ան ընկերութիւնը ընդունելու միտք չունենալուն յայտնի նշան մըն էր : Բայց ընկերութիւնը իր սկզբանցը ուղղախոհութեան, ու իր կանոններուն անվնասութեան վրայ տարակոյս չունենալով, խոհեմութիւն իր ձեռնարկութիւնը յառաջ տանելու կը ջանար. որն որ կատարելապէս յաջողելով, իր անդամակցաց թիւը օր ըստ օրէ կ'ելեւելնար, և շատ պատուաւոր ու մեծարոյ անձինք ալ անոր մասնակից եղան և կ'ըլլային :

Այս միջոցիս այսինքն 22 փետրուար 1847 Համազգեաց ընկերութեան վերաբերեալ քանի մը անձինք, չափազանց ազգասիրութեան ոգիէն շարժեալ, այն ժամանակուան Հայաստան տագրոյն մէջ նամակ մը հրատարակել տուած էին իրենց յա-

տուկ ստորագրութեամբը՝ որուն մէջը թէպէտ ոչ ազգի, ոչ կրօնքի, և ոչ եկեղեցականաց դէմ բան մը կար, բայց որովհետեւ առիթ մը եղած էր լրագրոյն հեղինակին՝ իր կողմանէ, Բրօքականտայի աշակերտ քահանայից վրայ քանի մը բան

1 Հայաստան լրագրոյն Ծերորդ Թրւոյն մէջ այսպէս գրուած է :

« Մեր յարգի բարեկամներուն մէկը հետեւեալ նամակս կը խրկէ մեզի որ օրագրոյս միջոցաւը հրատարակեմք. մենք ալ ինչպէս որ գրեր էր նէ այնպէս գրելէն ետքը՝ մեր մտածութիւններն ալ նոյն նիւթոյն վրայօք՝ առանձին կ'եւելցընեմք. մեր յարգի բարեկամին և ուրիշ ընթերցողներնուս խորհրդածութեանց նիւթ տալով » :

« Մեծարոյ տեարք . Յ . Պ . Տ . Կ . շա մուռճեանց , և Մ . Աղաթօն :

« Ահնէտկոյ մեծահաշակ Մխիթարեան միաբանութենէն հանգուցեալ մեծասպառիւ Հ . Միքայէլ Չամչեան վարդապետին անխոնջ աշխատութեամբը . 1786 տարւոյն յօրինուած : Հայոց պարսկական երրորդ հատորին մէջ ազգին տառապանաց ողբալի թերթերը կարդալնինի . սրտիս խորին տրտմութիւնը յանկարծ քաղցր մխիթարութեան վերածեց այս յօդուածը . « յաւուրս Ուրբանոսի ութերորդի ( սրապուն Հռոմայ ) Պօղոս Բոնոնիացի որ եղև եպիսկոպոս Ունիթուաց 'ի Նախջուան' գնացեալ 'ի Հնդիկս և յայլ տեղիս , և յապա յԱմերիկայ , ժողովեաց արծաթ և ոսկի բազում . և դարձ արարեալ անտի յորժամ եհաս 'ի Սպանիա , մեռաւ անդ . և զոր միանգամ ժողովեալն էր՝ եթող զամենայն կտակաւ կանգնել նոքօք դպրատուն Հայոց 'ի Հրուում » ( Եղի . 527 ) :

« Բայց ախոսս ինչպէս շուտով այն քանի մի ուրախալի վայրկեանները ինձմէ փախչելով՝ կրկին տրտմութեան և զարմացման մէջ ձգեցին զիս ապագայ այս խօսքերը . « Այլ դեռ ոչ եղաւ այն 'ի դործ , և սակայն 'ի տեղի առանձին դպրատան ընկալեալ եղեն ոմանք 'ի մանկանց հայոց 'ի հասարակաց դպրատուն , որ ասի Բրօքական տայու , ուսանիլ անդ և ձեռնադրիլ քահանայ և առաքիլ 'ի քարոզութիւն » :

« Բոլոր ասոնք մեծ հեռաքրքրութեան նիւթ երեւցան ինձի , մինչեւ ալ չի կրնա

լով՝ շարունակել իմ վերձանութիւնս վերջացուցի : Էզ մը տխուր ու ուրախախառն երկբայելի խորհրդածութիւններ սկսան միտքս պաշարել :

« Ար մտածէի այն իմաստուն անձին սաստիկ հայրենասիրութիւնը , աշխարհէ աշխարհ անխոնջ ընթացքը , քաշած վիշտերը , թափած քրտինքը , ու վերջապէս իր յարատեւ աշխատութեան սրահուիլը որ հազիւ թէ պիտոր վայելէր : Աւսող , անգութ մահին դիւրահատ մանգաղը շուտով կը զրկէ զինքն ու բոլոր ազգին խեղճ ծընունդը այս մխիթարութենէն : Անունը անգամ՝ որ անմահ պիտոր մնար , ժողոված ստրկին դումարին հետ անորոշ խաւարի մը մէջ կը թաղուի կը մնայ :

« Ար խորհէի թէ , ընդհանուր ազգաց համար արդէն բացուած եկեղեցական դպրոցի մը մէջ միայն քրիստոնէական կրթութեանց համար քանի մի հայ տղոց մուտքը կը հատուցանէ արդեօք հայու ազգին աշխարհական ընդհանուր տղոց ուսումնականութիւնը : Ար կատարէ՞ արդեօք միմիայն այս դիտաւորութեամբս շինուած կտակի մը նպատակը , որն որ եթէ գործքի դրուէր , երկու հարիւր քսան տարեկան ժամանակին ընթացքը քանի՞ արդեօք բարոյ յական և ուսումնական գիտութիւններով զարդարուած երիտասարդներու խումբեր պիտի նուիրէր ազգին : Ո՞րչափ ընտիր ընտանիքներու բազմութիւններ պիտոր գրունուէին սյսօր ազգին մէջ . . . : Ախոսս որ ազգը այս միջոցով գալու ընդհանուր բարեբներէն զուրկ մնացեր է մինչեւ սյսօր » :

« Ար զարմանայի թէ արդեօք ի՞նչ պատճառներով այս ստակին գումարը ու կտակին նպատակը անդործադրելի մնացեր են մինչեւ սյսօր : Եղեր է մի արդեօք այնպիսի ժամանակ մը , ուր որ մեր հայրենասէր ազգակիցներէն ոմանք այսպիսի կարեւոր նիւթի մը վրայ որոշ տեղեկութիւններ առնելու , որ ճիշդ քննութիւններ ընելու ետեւէ եղած՝ այս խնդրոյս որոշմունք մը տանու թէ որ եղած է՝ ինչու վերջիչեալ պատ



զուրցելու<sup>1</sup>, և ասանկով ազգին քահանայից ու ընկերու-  
թեան մէջ ներհակութեան դուռ մը բանալու, որ բոլորովին  
դէմ էր ընկերութեան կամացը ու նպատակին, ինչպէս իրեն  
յայտարարութիւնը կը վկայէ ըսելով: «Միասիրտ միակամ խա-

մութեան ընթացքը չի ծանուցաներ:

» Վերջապէս, այսպիսի ու դեռ ասոնց  
նման խորհրդածութիւններու մէջ միտքս  
ժփաղինի՝ յանկարծ պատահեցան ինձի յար-  
գոյ պարոնք Ս. Աղնաւոր, ու Վ. Թիւլ-  
պէնաճեան բարեկամներս. կարգացի անոնց  
պատմութեան վերոյգրեալ հատուածը.  
կրկնեցի իրենց բոլոր իմ խորհրդածութիւն-  
ներս, ասոնց նման էր իրենց մտածութիւն-  
նին ալ: Բաւական խօսակցութենէ վերջը  
Պ. Աղնաւորին խորհրդովը փափաքեցանք  
հասարակաց հաղորդելու այս մեր խորհր-  
դածութիւնները. մտածելով թէ անշուշտ  
կը գտնուին դեռ մեր ազգին մէջ այս նիւ-  
թիս վրայ ճիշդ տեղեկութիւն ունեցող ան-  
ձինք, որոնք գուցէ բարեհաճին իրենց ման-  
րամասն ծանօթութիւնները մատուցանել  
մեզի. որով լեցուի մեր ու բոլոր ազգին ու-  
նեցած հետաքրքրական իղձը:

» Ուր էր թէ մեր այս փափաքը կատա-  
րած տեսնէինք:

» Այս նպատակով քաջալերեալ կը հա-  
մարձակիմք մատուցանելու զայս՝ մեծարու-  
տեսացող. խնդրելով որ՝ բարեհաճիք հրա-  
տարակելու ձեր Հայաստան համբաւաւոր  
անկողմնասէր օրագրոյն միջոցովը »:

Ղալաթիս Կ-Պօլսոյ: Ալեի- Լոս-Ֆէանց  
12-24 փետրւար 1847 Ս. Աղնաւոր:  
Վիւէն  
Յ. Թիւլպէնաճեան:

1 «Այս յարգի ազգասիրաց ուղած  
տեղեկութիւններուն վրայօք առ այժմ խօ-  
սելու բան չունինք. և մեզի կ'երեւի որ՝  
Պօղոս Բոնոնիացիին ժողոված և կտակով  
ձգած ստակին հետքը չի գտնուիր: Թէ որ  
Պօղոսի ըրած կտակին տեղեկութիւնը Հը-  
ռոմ հասած ատենը ստակն ալ հոն հասած  
ըլլար նէ՝ այն բարեսէր եպիսկոպոսին կամքն  
ալ կը կատարէր: Ուստի կ'երեւի որ՝ այն  
ստակը Սպանիա դոմինիկեան կրօնաւորաց  
վանքերուն մէկուն մէջ մնացած, և Ժ. Թ.  
դարուս սկիզբը՝ էրբ որ Սպանիայի քաղա-  
քական փոփոխութեանց ատենը վանքերուն

ալ շատերը, և հաւանականաբար աւելի  
հարուստները կողոպտուեցան, և այն տե-  
ղաց ելած ստակները ո՞վ գիտէ որի ձեռք  
մնացին: Թէ որ ասոր վրայ աւելի տեղեկու-  
թիւն փնտրուել պէտք ըլլայ նէ՝ աւելի Ըս-  
պանիայի արձանագրութիւններէն և յիշա-  
տակարաններէն կը գտնուի, քան թէ Հը-  
ռոմէն:

» Այս ստակով կանգնուելու գպրա-  
տունը կրնար արդեօք ազգին օգտակար ըլ-  
լալ կամ չըլլալ, ասոր վրայ դատողութիւն-  
նիս այսքանի միայն կը հասնի, որ ազգային  
ուսմունքը յառաջացրնելու միջոցը՝ թէ որ  
ազգին ընդհանրութիւնը լուսաւորելու մըտ-  
քով պիտի ըլլայ նէ, հայոց բազմութիւն  
գտնուած տեղէ դուրս ասանկ գպրատուն  
ըլլալ՝ ազգին ընդհանուրին օգուտ չընէր:  
Վէնէտիկու բազմերախտ միաբանութիւնը՝  
սուրբ Ղազարու վանքը, և Վիեննայի պաշտ-  
պան սուրբ Աստուածածնի վանքը ազգային  
ուսմանց կեդրոն մը ըրին. բայց հարկ է  
խոստովանիլ որ՝ թէ որ հայաբնակ երկիրնե-  
րուն մէջ ուսմանց համար ամէն մէկ երկրին  
իրենց կարեացը համեմատ գպրատուններ  
չըլլար նէ՝ անոնց տպագրութեամբ հրատա-  
րակած գիրքերուն օգուտը խիստ քիչ կ'ըլ-  
լար, գիրքը օգուտ ընելու համար հարկ է  
որ կարգացուի, կարգալու սէր ձգել տը-  
ւողը ամէն մէկ տեղին գպրատունները պի-  
տի ըլլան:

» Ազգին մէջը ուսմունքը՝ քարոզիչնե-  
րու ձեռքով չի ծաղկիր. Բրօքականայի  
գպրատունէն ելողները քարոզիչ կ'ըլլան.  
վարժապետ չեն ըլլար. Պօղոս Բոնոնիացիին  
կտակ ըրած գպրատան աշակերտներն ալ  
քարոզիչ պիտի ըլլային. ուստի յիշեալ բա-  
րեսէր անձին կտակը թէ և ճիշդ կատար-  
ուած ըլլար, և այն գպրատունը շինուած  
ըլլար, անանկ օգուտ մը չէր ըլլար ազգին,  
որ երկու հարիւր քսան տարիէ՝ ի վեր այն  
օգուտէն զրկուած եմք ըսելով ցաւելու ի-  
րաւունք ունենամք: Թէ որ ըսուի որ՝ այն  
գպրատունը ազգային ըլլալով կրնար ազ-  
գը գպրատան կառավարութեան կերպը և

դադասէր շաղկապու մն անձանց 'ի մի միաբանութիւնն ։ Մնկե-  
րութիւնը ասանկ գծտութիւնն ։ պատճառող բաներու բնաւ  
մասնակցութիւնն չունենալը յայտնի ու հրապարակաւ ցուցու-  
նելու համար , այն նամակը ստորագրող անձինքը անմիջապէս  
հանեց իր անդամակցութենէն , ու նոյն լրագրոյն միջոցաւ հրա-

ուսանելիքը և ուսման ոճը ժամանակին  
պարագայներուն համեմատել , ասոր կը պա-  
տասխանեմ , որ թէ որ դպրատան հիմնադ-  
րին կտակը՝ դպրատան ընթացքին սահմա-  
նը որոշէր էր , և այն տեղաց ելելու աշա-  
կերաները Ունիթուաց հետ միանալ և Հա-  
յաստան քարոզութեան երթալ կարգադ-  
րէր էր նէ՝ այն կտակը չէր աւրուեր . և  
Բրօքսականտայէն աւելի մեր ազգին օգտա-  
կար մարդիկ չէր հաներ :

» Բրօքսականտայի աշակերտները , որ +օ-  
լէճնի անուանով ճանչցուած են , իրենցմէ ըլ-  
լալու օգտին առաջը անով գոցած են , որ  
ազգային ուսմունքը իրենց մէջէն գրեթէ  
բոլորովին դուրս հանած են , Հայերէն գը-  
րաբառ լեզուի մշակութիւնն չկայ իրենց  
դպրատունը , որ իրենց նպատակին շատ  
հարկաւոր է . Հայոց եկեղեցական բանե-  
րուն վրայօք տեղեկութիւնները բուն հայ-  
ազգի հեղինակաց գիրքերէն սորվելուն տե-  
ղը լատին գիրքերէ , և մանաւանդ Աղեմէս  
կալանոսին գիրքէն կը սորվին . որ սխալ-  
ներով լեցուն ըլլալը Հ . Միքայէլ Չամչեան  
Հայոց պարսկա-լեան մէջ , և ուրիշները յայտ-  
նած են , չէ թէ միայն հայազգի , այլ և օ-  
տարազգի հեղինակներէն ալ : Հայոց հայ-  
րապետներուն վրայ այնքան տեղեկութիւն  
ունին , որքան որ Աղեմէս կալանոս ունե-  
ցեր է . և այս բանիս պատճառը՝ Հայերէն  
լեզուի ուսմունքը Բրօքսականտայի մէջ ըստ  
արժանւոյն չի մշակուիլն է : Հետեւութիւ-  
նըն ալ ինչ է . այն է որ՝ նոյն +օլէճնիները  
թէպէտ և արժանապատիւ մարդիկ , ազ-  
գին մէջ յարգերնին իրենց արժանաւորու-  
թեանը չափ չէ . որովհետեւ իրենք ալ ազ-  
գին վրայ կատարեալ տեղեկութիւն չունե-  
նալով , չեն կրնար հասկընալ թէ ազգը որ-  
քան յարգութեան արժանի է . ուստի ազ-  
գը ըստ արժանւոյն չեն կրնար յարգել :

» Նամակին յարգի հեղինակը կ'ըսէ .  
« Ար խորհէի որ . . . եկեղեցական դպրո-  
ցի մը մէջ միայն կրօնական կրթութեանց

համար քանի մը Հայ տղոց մուտքը կը հա-  
տուցանեն՝ արդեօք Հայու ազգին աշխար-  
հական ընդհանուր տղոց ուսումնականու-  
թեան իրաւունքը » : Բայց ես ալ կը խոր-  
հիմ որ՝ այն դպրատան անօգուտ ըլլալուն  
պատճառ՝ այդ պարագայները չեն : Ազգին  
կապը՝ կրօնքն է . թէ որ ազգը կորսնցը-  
նել չեմք ուզեր նէ՝ առանց կրօնական կրթ-  
ութեան դպրատուն ունենալը աղէկ բան  
չէ : Կրօնական կրթութենէ դուրս ինչ  
պիտի սորվիմք : Կրօնական կրթութենէ  
դուրս կ'ըսեմ , դապ չեմ ըսեր : Տէրն մեր  
ըսաւ , « Որ ոչ ժողովէ՛ լընդիս ցրուէ » :  
Այս աստուածային խօսքը՝ շատ խորին մը-  
տածութեան արժանի գործ մըն է : Ազգը  
փիլիսոփայ պիտի ընես , արուեստաւոր պի-  
տի ընես , բնագէտ կամ բնալոյծ կամ մե-  
քենագէտ պիտի ընես , և ասով մի ազգը  
մէկ տեղ ամիսով պիտի պահես : Կրօնական  
կրթութիւնը ասոնց հիմն ընես նէ՝ ազգը  
վաստրկեցար և գործդ ալ յաջողութիւն  
գտաւ : Կրօնական կրթութիւնը դուրս  
ձգուի նէ՝ ուրիշ ինչ կերպով որ պիտի ժո-  
ղովես նէ , ժողովելու տեղդ կը ցրուես . ա-  
սիկայ անջրելի ճշմարտութիւնն է :

» Թէ որ ամէն ճշմարտութիւն քրիս-  
տոնէական կրօնից մէջ պիտի պարունակուի ,  
և ճշմարտութիւնը մէկ է , տեսակ տեսակ  
ճշմարտութիւն չըլլար նէ , կրօնական կրթ-  
ութեան հիմանը վրայ չի հաստատուած  
փիլիսոփայութիւնը քիւրիստոնիստ-լեան ըսուե-  
լու արժանի չէ . որովհետեւ ճշմարտութեան  
դուրս ճշմարտութիւն փնտրուել է : Ար-  
ուեստներուն մէջն անգամ կրօնական կրթ-  
ութեանը հարկաւոր ըլլալու տեղեր ունի .  
որոնք մի ըստ միովէ բացատրելը կրնայ ամ-  
բողջ գրքի մը նիւթ ըլլալ . առ այժմ կ'ա-  
ղաչեմ վերոյգրեալ նամակին յարգի հեղե-  
նակը և բարեկամները , որ մեր առաջար-  
կած խորհրդածութիւններն ալ իրենց մը-  
տածութեանցը նիւթ ընեն : Ինձ այնպէս  
կ'երեւի , որ այս խորհրդածութիւններովս

տարակած առանձին յօդուածով մը ցուցուց իր կամքը և իր միտքը 1 :

Բայց միայն Պատով չի կրնալով բաւականանալ, մասնաւոր գրով մը իր տհաճութիւնը և իր մասնակցութիւն չունենալը յայտնեց Նախագահ Հօրը, որն որ այն գրուածքին պատշաճ պատասխան մը չի տալէն ետեւ, թղթոյն վրայ կոխուած ընկերութեան կնքոյն բուն փորագրածը իրեն յանձնելին կամեցաւ այն գիրը ներկայացնող անձինքներէն : Նախագահ Հօրը այսպիսի անգործագրելի պահանջմունքը, որ մէկ կերպով մը ընկերութիւնը բուրովին իրեն յանձնել ըսել էր, և բանիւ և գործով ընկերութիւնը արգիլելու ջանքը ու փափաքը, որն որ բաւական վկայութեամբ ստուգուած էր, իրեն ընկերութեան վրայ ունեցած դիտաւորութիւնը յայտնագոյն կերպով մը ծանուցանելով, ընկերութիւնը պատշաճ դատեցաւ սրբազան Պապին առջի խոնարհական

շատ օգտակար բաներու վրայ ալ միտք հոգնեցրնելու ճամբաներ կը մտնուի 7 :

1 « Լրագրոյս ԾԾ թուոյն ազգային յօդուածին մէջ հրատարակուած նամակը և անոր պատասխանը կարգալով Համագլխաց անուանեալ բազմօգուտ և պատուական ընկերութեան Անգամները, հետեւեալ նամակս կը գրեն մեզի որ հրատարակեմք : Նիւթը մեր անցած շաբթուան ըսածը ըլլալով կը հրատարակեմք հիմա առանց մեր կողմէն խորհրդածութիւն ընելու » :

« Արժանապատիւ տեարք :

« Ձեր պատուական լրագրոյն ԾԾ յերրորդ թուովը, հրատարակած նամակը ու անկէ յառաջ բերած հետեւանքնիդ ընկերութիւնը կարգալով կը պարտաւորի ծանուցանելու որ նոյն թուղթին ստորագրող անձինքը Համագլխաց ընկերութեան անդամ և պաշտօնատէր ըլլալուն համար իրենց կարծիքը ու տարակուսութիւնը ընկերութեան կարծեացը հետ կասկակցութիւն մը չունենալով միայն իրենց առանձին մը տածութենէ յառաջ եկած է, որն որ ընկերութիւնը բնականաբար չկրնալով արգիլել կը պարտաւորի իր տհաճութիւնը հրատարակաւ ծանուցանելու, ու թէպէտ ամէն մարդ իր բնական անձնիշխանութեամբը ազատ է նիւթի մը վրայ իրեն դատումովը մտմբաւոր, բայց երբոր իրենց պաշտօնին

կամ ընկերութեան մը վերաբերելու պատճառաւ իրենց կարծիքը ամբողջ ընկերութեան մը կարծիք սեպելու տեղի կուտայ նէ, ան ժամանակը պէտք է որ այս իրենց խորհրդածութիւն միայն իրենց մտաց սահմանին մէջ պարունակեալ մնայ ու դուրս չելլայ, որպէս զի առիթ չի տայ ընկերութեան այս պատճառաւ տեղեկութիւն և տհաճութիւն ունենալու ի վնաս իւր պատւոյն :

7 Քրիստոնէութեան առջի ժամանակներէն մինչեւ ցայսօր ընդհանրապէս եկեղեցականք իրենց հոգեւորական պաշտօնին և պարտքերնին կատարելէն ետեւ, ուսմանց և գիտութեան ու նաեւ արուեստից ալ ետեւէ ըլլալով անհամար դպրատուններ անթիւ ու բազմահատոր ուսումնական գրքեր ու հրաշալի արուեստական գիւտերով ուսմանց ու գիտութեանց սկզբնապատճառ ու յառաջացուցիչ եղած են, ասիկայ այնպիսի անժխտելի ճշմարտութիւն մըն է, որ արեգական ճառագայթի պէս ամէնուն աչքին կը զարնէ և մասնաւորապէս բովանդակ Եւրոպայի ազգերը անհակառակելի կերպով ասոր կը վկայեն ու ճմարտութիւն կը խոստովանին : Եկեղեցականաց այս ջանքն ու աշխատութիւնը ստղաբերելով աշխարհականաց մէջէն բաւական ուսումնական ու հանճարեղ մարդիկ երեւան ելլալէն ետեւ, այսպիսի անձանց կառավարու-

գիրը յուղարկելու, իր կանոնները և միանգամայն իր նպատակը անոր ներկայացրնելով, ինչպէս քիչ մը ետքը ուրիշ գրով մըն ալ յուղարկեց իր գտնուած վիճակին պարագայները յայտնելով:

Վերոյգրեալ լրագրին հեղինակը իր շարադրած յօդուածին մէջ, Վէնէտիկու և Վէննայի միաբանութիւնները գովութեամբ, և Բրօքսէլանտայի աշակերտները տհաճութեամբ յիշելուն, աս վերջինները իրենց պատուոյն նախանձախնդիր ըլլալով, և այս ամենայն շփոթութեանց պատճառը իբրեւ Համազգեաց ընկերութիւնը ցուցունելով անոր վերնալուն համար աղերս մըն ալ իրենք շարադրեցին, ու սուրբ Փրկչին վանատունը հրաւիրեցին ամէն քահանայները, որպէս զի ստորագրեն, որոնցմէ ոմանք յանձն չառնելով ստորագրելու ոմանք ալ ստորագրեցին ու ներկայացուցին Նախագահ Հօրը: Եւ այս կերպով ընկերութեան ընդդիմակացութիւնը շատնալով, և առաւել զգալի կերպով մը ընկերութեան մնաս հասցնելը տեսնալով, ընկե-

թեամբը տղոց կրթութեան ու ուսման համար բացուած ու բացուելու դպրատուններուն եկեղեցականք բնաւ դէմ չի կենալէն ետեւ, մեզմէ եվել փափաք ընելուն վրայ տարակոյս չի կայ. միայն թէ ձեր խիստ սքանչելի խորհրդածութեանը պէս, որովհետեւ առանց աստուած պաշտութեան եղած իմաստասիրութիւնը սուտ փիլիսոփայութիւն է. անոր համար բովանդակ եկեղեցականաց դասը իրենց ճարտար քարոզութեամբ ու վարդապետութեամբը միշտ կը բողոքեն և պիտի բողոքեն այս սուտ փիլիսոփայութեանը դէմ, ոչ եթէ ուսմանքն ու գիտութիւնը արդիւնելով, քաւ լիցի. այլ աստուածային կողմանէ իրենց հոգեւոր կառավարութեանը յանձնուած ժողովրդոցը հօտը սուտ փիլիսոփայութեան խոր խորատներէն զգուշացրնելու ու ազահով ընելու համար, և որովհետեւ լաւ է ըլլալ բարի ու առաքինի քան թէ դիտուն, ասանկ ալ թէ Բրօքսէլանտան և թէ ուրիշ ազգօգուտ վանքերը իրենց հաստատուած ժամանակները տեսնալով որ սղգը օտարազգեաց մէջ ցրուած ըլլալով առաւել հովուի կարօտութիւն ունէր քան թէ վարժապետի, թէպէտ այս կողմն ալ զանց չերին, բայց իրենց բուն ճիգը մեծաւ իրաւամբ պինտ առաջ ազգին հոգեւորական ու կրօնական կրթութեանը վրայ թափե-

ցին որ ձեր հրամանոցը խորհրդածութեանը պէս մի միայն ազգային հաստատուն կապ է: Եւ յս ըսածնիս փորձով ցրցրնելու համար այս միայն կը ծանուցանենք որ Վէնէտիկի ու Վիէննայի բաղձափաստակ վանքերը անգամ որ այս օրուան օրս ուսմանքը ու դիտութիւնը մեծապէս կը ծաղկեցրնեն ու ծաղկեցրնելու ետեւէ են ազգին մէջ, իրենց բաղձարդիւն վաստակները պինտ առաջ հոգեւորականէն սկսելով ու միայն ազգին յայտ մասին եղած կարօտութիւնը անբաւ կրօնական գիրքերով լցուած ըլլալը տեսնալէն ետեւ, ուսումնականին մասնաւոր կերպով մը ձեռք զարկած են. թող Բրօքսէլանտայի աշակերտները որոնք պինտ առաջ խիստ հեռաւոր տեղեր ու շատ անգամ մինակ գտնուելուն համար իրենց հոգեւորական զբաղմունքներէն ժամանակ չեւէնալը յայտնի ըլլալով նաեւ սոյն այս արժանայարգ անձանց ջանքովն ու վաստակովն խիստ հեռաւոր ու կարօտեալ տեղերը ժողովրդեան վիճակին յարմար դպրատուններ բացած ըլլալնին վկայի կարօտ չէ ո:

Ի կոստանդնուպօլիս 28 փետր. 1847:

Տեոուէր ընկերութեան Համադգեաց  
Վ. Սօփեալեան.  
Սարգիս Արիերեան:

բուժիւնը որ նորածին ձեռնարկութիւն մը ըլլալով հաղիւ կրնար իրեն պէտք եղած կարգերուն ու կանոններուն վրայ հոգալ, պարտաւորեցաւ այս ընդդիմակացութեան հետ ահամայ կամօք մաքառիլ<sup>1</sup> :

Այս միջոցիս Սուրբ Գահին կողմանէ մասնաւոր դեասաւ նուժք հասաւ Կոստանդնուպօլիս Սոնսինեօր Վիչէնցոյ Ֆէրըիէրի արքեպիսկոպոսը. որուն յանձնուած էր նաեւ ընկերութե վերաբերեալ գործքերը քննելու, Այս պատուաւոր անձին հետ քանի մը երթեւեկութե ընկերութեան վրայ էղ մը խօսակցութիւններ ըլլալէն ետեւ, վերջին որոշումը ընդունելու համար ընկերութեան կողմանէ գացած պատգամաւորութեանը այս պատասխանը արուեցաւ թէ, « Բարձրագոյն դուռը այս բանիս » քննութեանը յանձնառու եղած ըլլալուն՝ ալ անօգուտ կ'երեւար իրեն մասնաւորապէս ասոր պարապիլը. ուստի և հարկ » չէր տեսնար ալ աս նիւթին վրայօք խօսակցութիւն ընել » : Ընկերութիւնը հոգեւոր մասին կարգադրութեանը համար հոգեւոր հեղինակութեան մը դիմելէն ետեւ, բարձրագոյն դրան

<sup>1</sup> Մօտերս Իզմիրու Արշարոյս Արարատեան լրագրին 577 թուոյն մէջ անվայել յօդուած մը ու նամակ մ'ալ տեսնուեցաւ, որն որ թէպէտ ստորագրութիւն չունէր, բայց հեղինակը իբրեւ ընկերութեան բերնէն գրածի պէս երեւցնելով, թէպէտ և ընկերութիւնը ամենեւին գիտակցութիւն ու մասնակցութիւն մը չունէր, 'ի վերայ այսր ամենայնի կրնար աղօտ մը բերել իրեն համբաւոյն այսպիսի անխոհեմական գրութեան մը : Յիրաւի նոյն նամակին հեղինակը մինչեւ հիմա ընկերութեան ալ անծանօթ է. բայց այս յայտնի է որ ընկերութե անկեղծ բարեկամի մը և կամ գիտնական մարդու մը գրութեան չէ : Վասն զի աս կերպով ընկերութիւնը ժողովրդեան առջին անարգելի ու անընդունելի ընելու պատճառ կը տրուէր : Բայց ասանկ անտեղի գրութեան մը նաեւ հերքելու համար զբաղիլ մեր ուղղախոհութեանը բոլորովին անվայել ու անարժան սեպելով կը լռենք : Անշուշտ ընկերութիւնն ալ աս մըտքով միայն հետագայ կարճաւոտ պատասխանը տպեց ու հրատարակեց : Այսպէս

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն

« Իզմիր տպագրուած Արշարոյս Արարատեան անունով լրագրին 577 թուոյն մէջ » հրատարակուած երկար յօդուածը. Հանազգեաց Ընկերութիւնը կարգաւոր կը դարձանայ անոր հեղինակին համարձակութեք, որ իւր մտածմունքը իբրեւ ընկերութե բերնէն կը հրատարակէ, ուստի ընկերութիւնը իրեն արդար պարտք մը կը սեպէ այս անիրաւութեան դէմ հրապարակաւ բողոքելու, որովհետեւ յիշեալ յօդուածին » ինքը ամենեւին գիտակցութիւն ու մասնակցութիւն չունի :

» Ընկերութեան վախճանը, նպատակը, ու վարմունքը արդէն իր կանոններուն » մէջ բովանդակած է, որոնք ամէն մարդ » կրնայ տեսնել և հասկնալ » :

Տէսուէր Համալգեաց Ընկերութեան  
Յալոբ Տալոբեան  
Անոն Պատմաճեան  
Խալապուր Գաղէրեան

աշխարհական իշխանութեանը յանձնուելուն ուրիշ կերպ մէկ նութիւն մը չենք կրնար տալ, բայց միայն նոյն առաքելական դեռսպանին երթալէն քիչ մը ետքը, Նախագահ Հօրը ընդհանուր ժողովքի մը մէջ ՚ի պաշտօնէ յայտնածը, այսինքն, բարձրագոյն դրան չընդունելը թէ ազգային ժողովքի մը հաստատութեան առաջարկութիւնը, և թէ Համազգեաց ընկերութիւնը: Բայց աս բանիս աղէկ մը տեղեկութիւն ունենալու համար պէտք է մինչեւ դիպուածներուն աղբիւրը երթալ:

Մեծազօր տէրութիւնը իր հպատակներուն ամէն կերպով հանգրստութեան ու յաջողութեան հոգ և փոյթ տանելով, իրենց զանազան գործքերուն դիւրութեանը համար պէտք եղած միջոցներուն գործադրութեանը մեծ յօժարութիւն ցուցուցած և արդէն քանի մը ազգի իրենց վերաբերեալ գործքերը հոգալու համար ազգային ժողովքի արտօնութիւն տուած էր: Ազգին մէկ մասը տէրութեան այս մարդասիրական խնամքէն անհաղորդ չի մնալու և ազգային գործողութեանց առաւել պաշտօնական կերպով մը հոգ տանելու մտքով բարձրագոյն դռնէն անանկ աշ

Չարմանալու բան է որ այս ծանուցումը, նոյն յօդուածին վրայ խորհրդածութիւն ընող ճշմարտաւէր անձի ճշ սիրաբէական շեշտներ: Եւ որն որ ընկերութեան կողմանէ, իր ժողովարանէն և իր տեսուչներուն ստորագրութեամբ հրատարակուած թուղթը առանձին մարդոց գործ մը կը համարի ըսելով. « Եւ թէպէտ ոմանք ալ որ ամօոյս 10-22 թուականով տպագրած ծանուցումով ան յօդուածին դեմ ԻՔԵ Բողոքի կ'ուղեն նէ ալ այն յօդուածը Հանձնազգեաց ըսուած ընկերութեան մտաց համաձայն ըլլալը չեն ուրանար, այլ միայն նոյն յօդուածը կամ նամակը շարագրողը համազգեաց ըսուած ընկերութեան գիտակցութեամբ և ճանաչողութեամբ գրած չէ որ ըսելով, միամտաց աչքը ներկել կ'ուղեն, որ ան ծանուցումով ընկերութեան ծագած որ կամ ծագելու փաստները, որպէս թէ ընկերութեան պտուղները չըլլալը երեւցընելու կը ջանան: Սակայն բանը հասարակութեան աչքը անանկ աղէկ բացաւ, որ ալ ամէն մարդ աս կերպ մեկնութիւններէն որ դիւրաւ չկրնար խաբուիլ որ և այլն (Երեւ 11): Արդ ճշմարտաւէր հեղինակը գիտնայ որ ոմանք ըսածը բոլոր ընկերութիւնն է, որն

որ իր տեսուչներուն ստորագրութեամբ կը հրատարակէ միշտ իր գրութիւնները: ԻՔԵ Բողոքի չենք գիտեր ուր տեղէն առեր է, երբ ծանօթութիւնը հրատարակուել կը բողոքէ, իսկ գիտակցութեան ու ճանաչողութեան շունինք ըսելը, այն յօդուածին մտացը համաձայն ենք հասկընալը, նոր, անծանօթ, ու զարմանալի հասկըցողութիւն մը կ'երեւի մեզի. և կը ցուինք որ այն հասարակութեան աչքը բացող բանը, ճշմարտաւէր անձին աչքը բոլորովին գուցեր է, որով չէ կրցեր տեսնալ նոյն ծանօթութեան տակի խօսքերն ալ որ կ'ըսէ. « Ընկերութեան վախճանը նպատակը ու վարմունքը իր կանոններուն մէջ բովանդակած է, որոնք ամէն մարդ կրնայ տեսնալ և հասկընալ ». ինչպէս այն ճշմարտաւէրն ալ կրնար տեսնալ և գուցէ ալ հասկնալ, թէ որ բարեկամական աչքով ակնարկելու ըլլար: Վասն զի անիկայ առանց ընկերութեան գիտակցութեան ու մասնակցութեան գրուած նոյն նամակը առիթ ընելով, մեզադրական տարակոյս մը կը հանէ ըսելով թէ, « Բայց գուցէ անիկայ (սք ժողովքին նամակը) կարդալէն ետեւ ոմանց որ մտքին մէջը տարակոյս մը ծնած ըլլայ, թէ

խարհական ժողովքի մը արտօնութիւն խնդրելու ետեւէ էին, որն որ ինչպէս ըսինք ուրիշ ազգերը արդէն ստացած ըլլալով պըտուղն ալ կը վայելէին: Ազգին խնդրածը բոլորովին աշխարհական ժողովք մը ըլլալով, բնաւ եկեղեցական իրաւանց խառնըւիլ և կամ՝ անոնց նուազութիւն մը բերելու մտքով չէր, այլ իրեն ՚ի մօտոյ վերաբերեալ նիւթերուն մէջ իր իրաւունքը խափանող ազդեցութենէ ազատ պահելով անոնց վրայ անձամբ անձին հսկողութիւն ընել էր: Եւ այց ազգին այս գովելի դիտաւորութեանը օտար մեկնութիւններ տալով, և ընկերութենէն բոլորովին անկախ նիւթ մը ընկերութեան պտուղ երեւցնելով, ընկերութեան հակառակորդները իրենց բոլոր կարողութիւնը ՚ի գործ դնելով, բարձրագոյն դրան անհաճոյ երեւցուցեր էին այս երկու ազգօգուտ ձեռնարկութիւններն ալ՝ գոնէ ժամանակ մը. որն որ ինչպէս վերը ըսինք, նոյն Ասխազահ Հայրը յայտնեց ՚ի պաշտօնէ ժողովքի մը մէջ ըսելով թէ, « Աշխարհական ժողովքին հաստատութեան առաջարկութիւնը և ընկերութիւնը բարձրագոյն դուռը չընդունեցաւ. ու նաև ընկերութիւն վերաբեր-

որ արդեօք սուրբ ժողովոյն վախը ու գուռ շահութիւնը թէ աս ընկերութիւնը վըտանգաւոր ու փնասակար կրնայ ըլլալ հիմնական ու հաստատուն է թէ չէ. բայց յիշեալ լրագրին մէջը նոյն սուրբ ժողովոյն յիշեալ թղթին իբր պատասխան հըրատարակուած նամակը կարգալէն ետքը՝ կարծեմ որ նամակին հեղինակը իր անկերպ յանդգնական գրութիւնովը անոնց տարակոյսը կատարելապէս փարատած է, ու իրենց յայտնի ցուցուցած է, թէ իրաւընէ հիմնական ու իրաւացի է եղեր սուրբ ժողովքին վախը թէ աս ընկերութենէ չարիք կրնան ծագիլ, ազգին ուղղափառութիւնը ապականելու բողբոջներ ելլել, ու անիկայ զանազան փնասակար կարծիքներու խոտորեցնել» (էրէս 11). և քիչ մը ետքը կ'ըսէ. « Պատկառելի սուրբ ժողովքէ մը, կաթուղիկէ եկեղեցւոյ ծայրագոյն գլխոյն հաճութեամբ ու հաւանութեամբը հրատարակուած վճռոյ դէմ, այդ ընկերութեան մէկ անդամին կամ պաշտպանին այսչափ ու այսպիսի արհամարհական յանդուգն ու քսամներ լեզու բանեցընելը . . . . . նոյն սուրբ ժողովին վախը ու տարակոյսը շարժարացնէր, ուստի և վերը

« ըսած խօսքերս ալ չի՞ հստատեր մի» (էր 13): Ո՞վ կրնար երեւակայել որ աս ճշմարտաւէր հեղինակը այս տողերը գրած ժամանակը տըրամաբանութիւն չգիտնարով քիչ մը ետքը, այսինքն քառասուն յիսուն տող գրելէն ետքը, զարմանալի սրամտութեամբ մէկէն ՚ի մէկ տրամաբանութիւն կը սորվի ըսելով թէ: « Միթէ ՚ի մասնաւորէ առ ընդհանուրը, կամ սակաւէն առ բազումը, ու մէկ երկու օրինակէն ուրիշ շատ վըտաներու իջնալով՝ անոնք ալ անիրաւ են որ ըսելու ուղիղ տրամաբանութիւնը ու պատմութեանց օրէնքը կը ներքէն մի» (էրէս 17): Եւ այսպէս մեզի հոգ չձգեր իրեն ըսելու թէ իրաւընէ մասնաւորէն ընդհանուրը, կամ մէկ անդամէն ու պաշտպանէն ինչպէս ինքը կ'ըսէ ամբողջ ընկերութիւն մը բամբասելը ուղիղ արամբանութեան ու ճշմարտութեան չէ: Ո՞ւր թողունք որ մասնաւոր կամ պաշտպան անձ մը ըսուածն ալ, անձանօթ սւ տարակուսելի անձ մի է ինչպէս ճշմարտաւէր հեղինակն ալ կը վկայէ իր յառաջաբանական զուրցուածքին մէջ, բայց թէ և ընկերութեան անդամակցաց մէկն ալ ըլլար նոյն նամակին հեղինակը, ՚ի վերայ այս ամի իրեն՝ (ճշմարտաւէր անձին) յայտնի քարո-

” եալ նիւթոց մէջ բարձրագոյն դրան կամքն ալ, Սօնսինեօր  
” Ֆէրրիէրիին մտածմանը համաձայն էր ”:

Ազգին մէկ մասը և ընկերութիւնը այս առաջին անյաջողու-  
թենէ բնաւ չի վհատեցաւ. իրենց որոշումը ուղիղ և անյող-  
դյողդ. իրենց սկզբունքը արդարութեան և ճշմարտութեան հե-  
տեւութիւն մը ըլլալուն մեծ քաջալերութիւն ստացան և կայ-  
սերական գթութեան ու արդարութեանը ապաւինելով, աղեր-  
սագիր մը ներկայացուցին Ա. Ե. հանձն Նիքնակալին, որն որ բարե-  
հաճելով ընդունիլ, իր բնական արդարակորով դատողութեամ-  
բը, հրամայեց ազգային ժողովքին և ընկերութեան հաստատ-  
ուիլը, բարձրագոյն դրան ձգելով պէտք եղած պարագայները  
հոգալու. և արտաքին գործոց պաշտօնատարն ալ արքունական  
հրամանին հպատակելով, ազգին մեծամեծներէն տասը հոգի այ-  
սինքն հինգ մէկ կողմանէ և հինգ միւս կողմանէ, և Նախագահ  
Պատրիարք Հայրը իր փոխանորդովը հրաւիրելով բարձրագոյն  
դուռը զանազան խօսակցութիւններէն ետեւ, ընկերութեան  
կանոնները մասնաւոր ազգային ժողովքով մը ՚ի ներկայութեան  
բարձրագոյն դրան պաշտօնատարի մը քննել և արդարասիրու-

ղած և ամէնուն դիտցած ուղիղ տրամա-  
բանութիւնը կը թողնէ որ այնպիսի հակա-  
ական դատողութեան տակ իննայ. ինչպէս  
մի և նոյն պարագայի մէջ երկու կերպ դա-  
տողութիւն կրնայ ըլլալ. այսինքն հակա-  
ռակորդին խնդրոյն մէջ, մասնաւորէն ընդ-  
հանուրը հետեւեցրնելով բամբասել, և իր  
խնդրոյն մէջ, մասնաւորէն ընդհանուրը չի  
հետեւեցունելով ջատագովել: Ասիկայ չէ թէ  
ճշմարտասիրութեան այլ յայտնի խղճասի-  
րութեան է: Միթէ ճշմարտասէր հեղինակը  
չգիտէր որ ընկերութիւն ըսելով, ընկերու-  
թեան սկզբունքը և կանոնը կ'իմացուի, ո-  
րով կը միանան ՚ի մի միութիւն մասնաւոր  
անդամք, որոնք ենթագրեմք թէ ՚ի բնէ  
մարդ ըլլալով մարդկային տկարութեանց  
ենթակայ են ուրիշ ամէն մարդկանց հետ:  
Չգիտէր որ այսպիսի տկարութենէ բոլորո-  
վին ազատ պահելու համար, ընկերութիւ-  
նը մասնաւորապէս կանոնապահութիւնը  
կ'առաջարկէ իր անդամներուն: Չգիտէր  
որ ուղղափառութեան դէմ բան մը ընկե-  
րութեան կանոնացը, սկզբանցը ու ընկե-  
րութիւնը ներկայացընող ժողովքին գոր-  
ծադրութեանցը մէջ փնտռելու է, և ոչ

իր առանձին քանի մը անդամակցաց բա-  
րուցը և կարծեացը մէջ: Ամէնն ալ քաջ  
գիտէ, ինչպէս մենք ալ քաջ գիտենք, որ  
չունի ձեռքը ապացոյց մը նաեւ առանձին  
անդամներուն ուղղափառութեան ու բա-  
րոյականի դէմ գործք մը կամ կարծիք մը  
ունենալուն կամ յայտնած ըլլալուն. և  
ամէնն ալ միայն իր կողմնահաճ տարակու-  
տութեան վրայ հիմնած է: Բայց ընկերու-  
թեան հակառակորդը ըլլալով, այս ամէն  
պարագայները մտքէն կը հանէ կը հալածէ  
իբրեւ ճշմարտասիրութեան հակառակ փոր-  
ձութիւնք: Եւ այսպէս իր տրամաբանական  
գրութեք դէմ մէկէն ՚ի մէկ անձանօթ ան-  
ձը իբր ծանօթ ցուցունելով մասնաւորէն  
ընդհանուրին կը վազէ, որ է հակառական  
դատողութի:

Շատ սիրով կը փափաքէինք որ գէթ  
ասկէ ետեւ այն ճշմարտասէր անձը քիչ մը  
ճշմարտութիւն փնտրուելու ետեւէ ըլլար,  
որովհետեւ կը տեսնանք որ մինչեւ հիմայ  
ճշմարտութիւնը կը սիրէ առանց գիտ-  
նալու կամ ճանչնալու, կամ գոնէ միայն  
իր երեւակայութեան մէջ գտնուած ճշմար-  
տութիւն մը, որ մեղի անձանօթ է:



Թեամբ բարեկարգելով ընկերութեան հաստատութիւն տալը պատշաճ դատուելով՝ որոշուեցաւ :

Եւ ըստ այսմ որոշման բարձրագոյն հրամանաւ Վերապայ-  
ծաւ Նախագահ ու Պատրիարքը հանդերձ ծայրագոյն վար-  
դապետներով , աշխարհական մեծամեծք իրենց ստորակազ-  
մեալ և յատուկներով , և ընկերութիւնը իրեն երեսփոխաններ-  
ով , ժողովեցան ՚ի Պատրիարքարանն յամի Տեառն 1848 յունիս  
ամսոյն մէջ ՚ի ներկայութե բարձրագոյն դրան առաջին թարգ-  
ման Ասեմափայլ Վսին էֆէնտիցին . որն որ ՚ի սկզբան ժողովոյն  
համառօտ ատենարանութիւն մը ընելով , յայտնեց աէրութեան  
կամքը , որ չէր ուզեր ընկերութեան խափանուիլը . այլ կը կա-  
մէր իր կանոններուն արգարասիրութեամբ բարեկարգութիւնը ,  
ուստի և առ վախճանին համար հարկ էր զանոնք մի առ մի հաս-  
կընուլ և քննել , որն որ կատարուեցաւ յետագայ կերպով ՚ի ներ-  
կայութեան վերոյգրեալ ժողովականաց <sup>1</sup> :

Առաջին հին կանոնը այսպէս գրուած էր . « Համազգեաց ըն-  
դերութեան դիտումը ազգին ամէն կերպով բարիք ընել է .  
ուստի նախ և առաջ վարժարաններ ու դպրոցներ բանալու է .  
տեւէն պիտար ըլլայ » : Բայց այս կանոնը բարձրագոյն դրան  
տրուած օրինակին մէջ արդէն սրբագրուած և ընկերութե նը-  
պատակն ալ առաւել ճշգրութեամբ սահմանուած ըլլալուն , ա-  
ռանց հակառակութեան ընդունուեցաւ . ( տես կանոն Կ . ) :

Երրորդ կանոնը կ'ըսէ . « Համազգեաց ընկերութեան ան-  
դամ գրուողը կը պարտաւորի նախ կանոնները ընդունիլ ու  
հաստատ պահելու . դաշամբ ստորագրել կանոնագրութեանց  
դրքին մէջ » , և անմիջապէս ետեւէն եկող չորրորդ կանոնը կ'ը-  
սէ . « Համազգեաց ընկերութեան վարժարաններուն ու դպրոց-  
ներուն մէջի վարդապետութիւնը պիտի ըլլայ Վաթողիկէ Հը-

1967.

1 Ընկերութիւնը իր հաստատուած ժա-  
մանակը իրեն կանոն մը շարագրած էր , ու  
րոնց սմանք միշտ անփոփոխելի , և սմանք  
ալ ըստ ժամանակին և պարագայից փոփո-  
խելի էին ըստ ԾԾ երորդ կանոնի : Այս առ-  
ջի կանոնին օրինակը ինչպէս ըսինք , իրը-  
կուեցաւ սուրբ Գահին պէտք եղած ժա-  
մանակը , ետքի երկու տարուան փորձը ու  
գործածութիւնը աւելի մտաւ ընկերու-  
թեան պատշաճ տեսած քանի մը փոփոխու-  
թիւնները արդեամբ կատարելու , ուստի  
երբոր կանոններուն օրինակը բարձրագոյն

դրան խաւրէլ հարկեղաւ , այն սրբագրուած  
երկրորդ կանոնը խաւրուեցաւ : Բայց այս  
երկու կանոնն ալ արժէք մը չունին հիմա ,  
որովհետեւ վերոյգրեալ ազգային ժողովոյն  
քննութեամբը ու հաստատութեամբը սահ-  
մանուեցաւ երրորդ ու վերջին կանոնը , որն  
որ ընկերութեան գրատունէն օրինակը առ-  
նելով ամբողջապէս զատ կը դնենք թերթեր-  
նուս վերջը , որպէս զի ընթերցողներուն մտքին  
մէջ , տարակոյս մը չմնայ կանոնացը որ և  
իցէ մտտին վրայ :

« ռովմէական ուղղափառ հաւատքը » : Այս երկու անփոփոխելի (տես կանոն 6) կանոնը գիտնալով, ընկերութիւնը Հռովմէական չեղող հայերը իր անդամակցութեանը ընդունելէն չէր հըրաժարած, որովհետեւ կանոնը պիտի ընդունէին և հաստատ պահելու դաշամբ ստորագրէին. նոյն կանոնը որ իր վարդապետութեանը ուղղափառ ու Հռովմէական ըլլալը անփոփոխելի կերպով յայտնէր էր : Մանաւանդ որ ընկերութիւնը ազգային ու ուսումնական ձեռնարկութիւն մը ըլլալուն, ինչպէս ամէն լուսաւորեալ ազգ եկեղեցիէն դուրս իրարմէ խտրութիւն չեն ըներ, ընկերութիւնն ալ անոնց նմանելով պոպիսի խտրութիւն մը չէր ըրած : Բայց եկեղեցականք ասոր հակառակը պնդելով, և տէրութեան պաշտօնատէրը քաղաքական ու տեղական անյարմարութիւն մը պատճառելով, հարկ եղաւ եւելցընելու, երկրորդ կանոնը, որ կ'ըսէ. « Հռովմէական չեղող հայերը չի կարենան » անդամ գրուիլ այս ընկերութեան » :

Այս ընկերութիւնը աշխարհական ընկերութիւն մը ըլլալով, հին կանոնը կ'ըսէր. « Այլեղեցականք ալ անդամ գրուին այս ընկերութեան, վճարելով իրենց բաժինը, ժողովք քան բայց » պաշտօնի մէջ չմտնեն » :

Մօնսինեօր Պէրրիէրիին հետ եղած խօսակցութեանց մէջ, այս քահանայից վերաբերեալ կանոնին վրայ ալ խօսակցութիւն գալով, նոյն Վերապատիւ անձը իր կարծիքը տուած էր այս կանոնիս վրայօք, ըսելով թէ, « Մենք ընկերութիւնը հաւասարութեան » վրայ հիմնած ըլլալով, իրեն հիմնական սկզբանցը դէմ կ'երեւար քահանայից ալ պաշտօնի մէջ չի մտնելը, ուստի կամ » պէտք էր որ բնաւ քահանայ չի գրուեր, և կամ անխտիր պաշտօնի ալ անցնէր », և որովհետեւ անխտիր պաշտօնի անցնելէն ալ ընկերութեան ժողովքներուն հաւասարակշուութիւնը կրնար աւրուիլ, ինչպէս վարը պիտի տեսնուի, անոր համար ան կանոնը արդէն փոխուած և եղած էր այսպէս. « Այս ընկերութիւնը բոլորովին աշխարհական ընկերութիւն մը ըլլալով քահանայք չի կարենան անոր անդամ գրուիլ, բայց հոգեւորի ու բարոյականի մէջ իրենց վերաբերեալ իրաւունքը 'ի գործ դրուի ուր ըստ 31 կանոնի » :

Բայց այս երկրորդ կանոնն ալ եկեղեցականաց առջին վայելուչ չի սեպուելով, և մանաւանդ ժողովքին մէջ գտնուող քահանայք, մենք ալ ազգ ենք և իրաւունք ունինք ըսելով մեծ բաղ

ձանք և յօժարութիւն ցուցուցին ընկերութեան մասնակից ըլլալու, անոր համար փոխուեցաւ և եղաւ կանոն 8. « Քահա-  
 ղայք ալ իբրեւ աշխարհական՝ կարենան անդամ գրուիլ այս ըն-  
 ղ կերութեան, բայց պաշտօնի մէջ չորս խորհրդական ու երկու  
 ղ խաղաղարարէն աւելի չի կարենան ըլլալ » (տես նաեւ կանոն  
 31) : Արտիճետեւ թէ որ ասկէց աւելի ըլլան, շաբաթական ժո-  
 ղովքները որ տասը խորհրդական և հինգ խաղաղարարով կ'ըլլայ,  
 թէ որ վեցէն եւել քահանայ պաշտօնատէր գայ, առաւել քա-  
 հանայի ժողովք կը սեպուի քան թէ աշխարհականի, թող ժողով-  
 քին հաւասարակշռութեան աւրուիլը :

Քառասներորդ երկրորդ հին կանոնը, նմանապէս քահանայ-  
 ից պաշտօնի անցնելուն վերաբերելուն, և ասիկայ 8 երրորդ և  
 31 երրորդ կանոններով սահմանուած ըլլալուն իբրեւ աւելորդ  
 ետ ձգուեցաւ : Միւս կանոնները երեւելի փոփոխութիւն մը չի  
 կրելով, քննուեցան և անցան : Միայն երեսունըմէկերորդ կա-  
 նոնը որ գրոց քննութեան կը վերաբերի երկար վէճերու առիթ  
 ըլլալէն ետեւ, Վերապայծառ Նախագահ Հօրը յանձնուեցաւ  
 իբրեւ մասնաւորապէս իր պաշտօնին վերաբերեալ. ան ալ իւր  
 կողմանէ շարագրեց այն կանոնը, որն որ ընդունեցաւ ընկերու-  
 թիւնը, և 31 երրորդ կանոնը եղաւ, տես հին :

Մհա այսպէս ի ներկայութեան բարձրագոյն դրան պաշտօ-  
 նատարին Վերապայծառ Նախագահ ու Պատրիարքին, ու ազ-  
 գապետ ամիրայից և ազգայնոց, երկու մեծ ժողովքներով, կա-  
 նոնները մէկիկ մէկիկ ամենայն ճշդութեամբ ու զգուշութեամբ  
 քննուելով, և ամէն մէկ կանոնին քննութիւնը ըլլալէն ետեւ,  
 տէրութեան պաշտօնատարը զատ զատ Նախագահ Հօրը վարդա-  
 պետաց և ամիրայից, ղուրցելու քան մըն ալ ունիք մի հարցու-  
 մը ընելէն, և անոնցմէ չունինք պատասխանը ընդունելէն ետքը  
 այն կանոնը ընդունելի ըլլալէն ետեւ, ի՞նչ կը մնար ընկերութե-  
 ընելու, կամ ի՞նչ է իր հակառակորդներուն կասկածը. իր Հա-  
 մազէեաց անձնը արդեօք, անոր վրայ ալ ժողովքին մէջ բաւա-  
 կան խօսք ըլլալէն ետեւ, ան ալ Նախագահ Հօրը որոշմանը  
 յանձնեցին, Նախագահ Հայրն ալ որոշեց ըսելով թէ, « Համազ-  
 ղեաց անունը մնալէն վտանգ մը չի տեսնուիր » : Ասոր վրայ  
 կատարեալ միաբանութիւն եղաւ ժողովքին մէջ, և կանոնները  
 ստորագրելու խօսքը ըլլալով, տէրութեան պաշտօնատէրին ըս-  
 տորագրածը մեր ամէնուն կողմանէ ստորագրած կը սեպուի ըս-

ուելլուն, թահրիրաթ միւտիրի բարձրապատիւ Սախտ է ֆէնտին, իր ստորագրութեամբը յետագայ վճիռը գրեց կանոններուն թարգմանութեանը տակը տաճկերէն լեզուաւ, որն որ ընկերութեան գրանոցը պահուած ըլլալով կրցանք օրինակը առնելու որ է այս .

Իշ պու նիզամնամէ թասհիհ վէ թանտիլ օլլունտուղունտան միւրաճամթ օլլունմար իւզրէ ապա : օլլարագ, պու վարագանըն մահֆուղ պուլլունմասը իշիւն իշպու մահայէ շէրհ վէրիւտի :

Անկէ ետքը Վերասպայժառ Նախագահը իր օրհնութիւնը տուաւ պահպանիչ զուրցելով, քահանայք և աշխարհականք խոստացան բաղմութեամբ ընկերութեան մասնակից ըլլալու՝ ալ առկէց ետեւ ամէնքնիս ալ կը գրուինք ըսելով, ու այսպէս ժողովուրդը իրարու հետ խնդակցութիւն ընելով, և աղբին ու ընկերութեան համար բարեմաղթութիւններ ընելով, բաժնուեցան :

Վի կրնար երեւակայել որ աս աղբային, եկեղեցական և տէրութեան կողմանէ հրամայուած և կատարած ժողովքը քիչ մը ետքը մեր հակառակորդներէն ոմանց առջին երազ պիտոր համարուի, մանաւանդ ճշմարտաւէր ուղղափառ ու Հոռիֆեական Հայո՝մը, որ աս կտորէն « Վանաւորանդ կ'ուրախանայ ( իր խօսքերն են ) ու » մանաւանդ թէ առիթ կը գտնայ ասանկ բանի մը վրայ ճշմարիտ տեղեկութիւն, ու հաստատուն լուսաւորութիւն տալու, որ ամէն վէճերուն վախճան կրնայ սալ » : Հոս այն ճշմարտաւէր անյին ճշմարտութենէն բոլորովին հեռացած ըլլալը սրատիւ կ'ունենանք իրեն ծանուցանելու, և ցուցունելու որ ճշմարտութիւն միայն սիրելը բաւական չէ, այլ փնտռել և ՚ի գործ դնել ալ հարկ է, ցաւելով որ իր այսպիսի ուրախութիւնը տրամուծի, և լուսաւորութիւնը խաւար կը դատուի ճշմարտութեան ստոյգ վկայներէն :

Ճշմարտաւէր հեղինակը կ'ըսէ . « Արդ յիրաւի ազգին մէջ » ժողովք եղաւ ուր Համազգեայ ընկերութեան վրայօք, բարձրագոյն դռնէն խաւրուած մասնաւոր սրաշտանատարի կամ գոր-

« Տակալի առջին զանազան խօսակցութիւններ եղան » և այլն :  
 Արդ նոյն ճշմարտակէր հեղինակը գիտնայ , կամ կամենայ գիտ-  
 նալ որ ազգին մէջը եղած ժողովքը , բարձրագոյն դռնէն խաւ-  
 բուած մասնաւոր պաշտօնատարի կամ գործակալի մը առջին  
 Համազգեաց ընկերութեան վրայ զանազան խօսակցութիւն ը-  
 նելու համար չէր . ասանկ զանազան խօսակցութիւնները լսելու  
 բարձրագոյն դուռը խիստ շատ անգամ առիթ ունեցեր էր : Ժո-  
 ղովքին վախճանը , Համազգեաց ընկերութեան կանոնները ար-  
 քունի հրամանաւ մէկիկ մէկիկ քննել , և տէրութեան կրօնի ու  
 ազգին դէմ բան մը գտնուի նէ անիկայ բարեկարգել էր : Ասի-  
 կայ Համազգեաց ընկերութեան վրայ զանազան խօսակցութիւն  
 ընել չէ , որն որ չգիտնալը եթէ կամաւոր է , մեզի անձանօթ  
 ճշմարտասիրուէ մը յառաջ կուգայ : Նոյն կեղեկալը կ'ըսէ , « Վե-  
 » բապայծառ Հասունեան Աթաբաղաւազ ամէն վէճերը անգամ մը  
 » վերջացրնելու ու ազգին մէջը խաղաղութիւնը հաստատ պա-  
 » հելու փափաքելով , ընկերութեան մէջէն յայտնապէս վնասա-  
 » կար երեւցող քանի մը բաները դուրս հանելով անիկայ ընդու-  
 » նիլը յանձն առաւ » և այլն . շատ աղէկ . բայց յայտնապէս վը-  
 նասակար երեւցող քանի մը բաները դուրս հանելով , Աթա-  
 գաւ Հայրապետին անիկայ ընդունելու յանձն առնելը բնակա-  
 նապէս երկու խնդիր կը հանէ : Սէկը արդեօք դազոնապէս վը-  
 նասակար երեւցող բան մըն ալ մնաց մի . և միւսը , եթէ մնաց  
 նէ ինչո՞ւ Աթաբաղաւազ Հայրը անոնք ալ դուրս չի հանեց , որպէս  
 զի ամէն վէճը անգամ մը վերջանայ ազգին մէջ , և ոչ թէ գաղտ-  
 նի առիթ մը մնայ նոր վէճ և հակառակութիւն ելլալու : Արդ  
 ընկերութեան կանոնները կարգացողները յայտնի կը տեսնան որ  
 աս կանոններէն ոմանք ընկերութեան նպատակը , դաւանութիւ-  
 նը , ու սկզբունքը կը յայտնեն , որ է բարոյական մասը , և ոմանք  
 ալ իրեն առտնին կարգադրութիւնը , որ է նիւթական կամ մե-  
 քենական մասը : Հոգեւոր վտանգը հարկաւ բարոյական մասին  
 մէջ պիտի ըլլայ , որուն վերաբերեալ կանոնները բոլորովին նու-  
 րոգուեցան ՚ի ներկայութեան և ազատ հաւանութեամբ Աթա-  
 գաւին . մեքենական մասը սյոսինքն ընկերութեան անգամ գըր-  
 ուողներուն թիւը , այսչափ կամ այնչափ դուռուշ տալը , ժողովք-  
 ները այսչափ կամ այնչափ մարդով ընելը , ամենեւին արտաքին  
 ու վէճ չի վերցունելու բաներ են : Արդ եթէ բարոյական մա-  
 սին մէջ գաղտնի վտանգ մը մնաց նէ , Աթաբաղաւազ Հայրը ի՞նչ

պատճառաւ չի յայտնեց , և ինչպէս այն ծածուկ վտանգով ըն-  
 դուները յանձն առաւ : Արնանք ըսել որ ասանկ ծանր նիւթի մը  
 մէջ Նախագահ հայրը և վարդապետաց խումբը չի գիտնալով  
 գործեցին , բայց ենթադրելով որ անանկ ըլլայ , կը խնդրենք որ  
 եթէ հիմա գիտցուեցան նէ այն ծածուկ վտանգներն ալ յայտ-  
 նուին ընկերութեան , որպէս զի ուղղէ և բարեկարգէ , վասն զի  
 այսպիսի աներեւոյթ վտանգները գիտնալով պահել ու չզրուցե-  
 լը , ոչ ճշմարտութեան , ոչ անկեղծութեան , և ոչ ուղղափա-  
 ռութեան վայելու բան է :

Ճշմարտակէր հեղինակը կը յաւելու . « Բայց ՚ի վերայ այսր ամե-  
 ՚նայնի գործքը չի կատարուեցաւ , ինչու որ թէ ընկերութեան  
 ՚կանոնները և թէ յիշեալ ժողովքին մէջ եղածը բարձրագոյն  
 ՚դրան պէտք եղաւ ցուցունել , անոնց վրայ ըստ պատշաճ կար-  
 ՚գի տեղեկութիւն տալ , ու անկէց իրեն վերաբերեալ բանե-  
 ՚րուն վրայօք հաւանուի առնելէն ետքը հրատարակել , ու աս ալ  
 ՚բարձրագոյն դրան կողմանէ չի կատարուեցաւ : Աս միջոցիս մէջ  
 ՚ընկերութիւնը միշտ կը ջանար իր գործքը յառաջ տանելու ,  
 ՚բայց վերոյիշեալ ժողովքին մէջ ընկերութեան կանոններուն  
 ՚վրայօք եղած սրբագրութիւններուն գլխաւոր մասերուն մա-  
 ՚նաւանդ մէկը առանց կատարելու . կ'ուզենք ըսել թէ Հռով-  
 ՚մէական եկեղեցւոյ հպատակ չըլլող համազգիք անոր մէջէն  
 ՚դուրս չի հանելէն ՚ի զատ , նորէն այնպիսի անձանց ան ընկե-  
 ՚րութեան անդամ ու ընկեր գրուելին շատերուն անձանօթ  
 ՚բան մը չէ » :

Գիտնալու բան մըն է որ Համազգեաց ընկերութիւնը առա-  
 ւել ազգային քան թէ տէրութեան վերաբերեալ բան մըն է ,  
 տէրութիւնը իրեն պէտք եղած զգուշութիւնները ՚ի գործ դը-  
 նելով , կանոնները քննեց , ծանօթացաւ , և ընկերութիւնը ազ-  
 գային ժողովքին ու շաղրութեանը յանձնելով բաւականացաւ :  
 Ասիկայ ամէնուն յայտնի է . ընկերութիւնն ալ այն միջոցին մէջ  
 այն կը ջանար իր գործքը յառաջ տանելու , բայց վերոյիշեալ ժո-  
 ղովքին մէջ ընկերութեան կանոններուն վրայօք եղած սրբագ-  
 րութիւններուն ամէն մասն ալ հաւատարմապէս կատարելով , և  
 ոչ առանց կատարելու ինչպէս անխիղճ կը զրպարտէ ճշմարտակէր հեղե-  
 նակը : Վասն զի թէպէտ ընկերութիւնը քաղաքավարութեան  
 համար Հռովմէական չեղող Հայոց ( որոնք արդէն խիստ քիչ-  
 ւոր էին ընկերութեան մէջ ) , չընդունուելուն համար մասնա-

ւոր յայտարարութիւն մը չի հանեց, բայց բանը հրատարակաւ  
 ըլլալուն, այն ժամանակէն մինչեւ հիմա մեծին ու պղտիկին ՚ի  
 լրոյ ծանօթ էր, անանկ որ այն ժամանակէն ետեւ Հռովմէա-  
 կան չեղող հայերէն ե ոչ մէկ անձ մը ընկերութիւնը կրցաւ ըն-  
 դունիլ, ինչպէ՞ ընկերութե՛ իւր անդամակցաց ցուցակէն ալ յայտ-  
 նի է: Թէ մեր ընթերցողներուն և թէ ճշմարտապէս հեղինակին  
 ցուցուցած շաբերուն մեծապէս երախտապարտ կ'ըլլանք, թէ  
 որ այնպիսի մէկը կրնան յականէ յանուանէ ծանուցանել մեզի,  
 որպէս զի չկարենանք ըսել որ նոյն հեղինակին՝ « Հռովմէական ե-  
 » կեղեցւոյ հպատակ չըլլող համազգիք անոր մէջէն դուրս չհան-  
 » ուելէն ՚ի դատ, նորէն այնպիսի անձանց ան ընկերութեան ան-  
 » դամ ու ընկեր գրուելնին շատերուն անծանօթ բան մը չէ » Ը-  
 սածը բոլորովին ճշմարտութենէ հեռու, յայտնի ու անվայել զըր-  
 պարտութիւն մըն է:

Այն հեղինակը իբրեւ երկրորդ և գլխաւոր առարկութիւն  
 կ'ըսէ. « Գերապայծառ Հասունեան Նախագահը վերոյիշեալ  
 » ժողովքը չըրած, ու անոր մէջ Համազգեաց ընկերութիւնը՝  
 » քանի մը փոփոխութիւն ընելէն ետքը՝ ընդունելու կամք ու  
 » պատրաստութի՛ դեռ չցուցուցած, ան ընկերութի՛ր գլխաւոր  
 » պաշտօնատէրները մասնաւոր բողոքագրով իրենց դատը, ընկե-  
 » րուէ կանոններուն հետ սրբզան Քահանայապետին կամ սբ ժո-  
 » ղովքին ծանուցած ու անոր յանձնած էին: Անոր համար սբ Վա-  
 » հէն պատասխան մը կամ կարգադրուի մը չեկած, այն ընկերուէ  
 » ընդունելութեան կամ չընդունելութեան վրայօք, ժողով, կամ  
 » խորհուրդ, և կամ անօրէնութիւն ու ճիշդ որոշում մը չէր  
 » կրնար ըլլալ: Ալ թէպէտ և Հասունեան Գերապատիւ Նախա-  
 » գահը, ազգը տակն ու վրայ ընող այն երկար վէճերը դադարե-  
 » ցընելու համար խաղաղութեան ճամբայ մը գտնալու մտքով  
 » վերոյիշեալ ժողովքին մէջ եղած որոշմունքներուն ձեռնամուխ  
 » ըլլալը իրեն աւելի համարձակութիւն չի սեպեց ալ նէ, բայց  
 » որովհետեւ սուրբ Վահը ու սուրբ ժողովքը ընկերութեան  
 » հանգամանացը, ընթացքին ու կանոններուն վրայ իրեն հար-  
 » կաւոր ու պատշաճ երեւցած զգուշաւոր քննութիւնը ընելով  
 » ու անոր վրայ, ինչպէս իր վճռոյն մէջ կ'ըսէ, լիով ու ճիշդ ծա-  
 » նօթութիւններ առնելով, իր յետին վճիռը հանելու էր...  
 » ուստի աս կարգաւորութեան ու վճռոյն թէ Գերապայծառ  
 » Նախագահ եպիսկոպոսապետը թէ Գերապատիւ Պատրիարքը

« և թէ բոլոր եկեղեցականները ու ժողովուրդը պարտադարձապէս  
 « հնազանդելու, որչափ որ ալ յառաջագոյն ժողով ըրած ըլլաւ  
 « լով, ընկերութիւնը փոփոխու թեամբք ինչ ընդունելու ու հաս  
 « տատելու խորհուրդ ըրած ու խոստում տուած ըլլուի ալ, վա  
 « սըն զի դատի մը վրայ բարձրագոյն ատեանին բաղորուելէն ետ  
 « քը, միայն այն ատեանին վճռոյն բողոքովին յանձնուելու ու  
 « որոշմանը սպասելու է. այնպէս որ անոր վճռէն առաջ ան դա  
 « տին վրայօք ստորին ատեանէ եղած որպիսի և իյէ տնօրինու  
 « մըն իբր չեղած կը սեպուի » : Հնորհակալ ենք այս հայրական  
 խրատէն, և իրաւաբանական առարկութենէն, բայց և կը սա  
 տասխանենք, յիրաւի Համազգեաց ընկերութիւնը երկու ան  
 գամ սրբազան Պապին խոնարհական թուղթ գրեց, բայց երկուքն  
 ալ 1848 տարուան փոփոխութիւններէն յառաջ էին, ինչպէս  
 վերը տեսնուեցաւ : Այն թղթերուն պատասխանը յանձնուած  
 էր Սոնսինեօր Ֆերրիէրի առաքելական այցելուին. որոնց վրայ  
 իրեն և ընկերութեան երեփփոխաններուն մէջ երկար խօսակցու  
 թիւններ ըլլալէն ետեւ, վերջապէս գործքը բարձրագոյն դրան  
 որոշմանը յանձնուեցաւ : Այս է ընկերութեան սրբազան Վա  
 հին այցելուէն առած պաշտօնական պատասխանը, որն որ գու  
 յէ վերջինը կ'ըլլար, թէ որ Հասունեան Վերապ. Նախագա  
 հը սրբազան Պապը շնորհաւորելու համար անձամբ Հռովմ չեր  
 թար, ու հոն առիթ չունենար ընկերութեան վրայ նորանոր  
 տեղեկութիւններ տալու, որուն յարմար պատասխանն ալ ըն  
 դունեցաւ ինքը, և ոչ ընկերութիւնը, սուրբ ժողովքին նա  
 մակովը, որն որ չի ծածկէր սուրբ ժողովքին Վերապայծառ Հա  
 սունեան Նախագահին դատման համաձայնիլը, ըսելով որ՝ « Ար  
 « ժողովքը պատշաճ դատեցաւ ձեր արդէն յայանաւճ դատումին  
 « յարմարիլը. ու առաջիկայ թղթովս վերոյիշեալ ընկերութեան  
 « վրայ իր տհաճութիւնը ցուցընելը » . և որով ընկերութեան  
 ինչ կերպ նկարագրուիլը յայանապէս իմացուեցաւ :

Սենք մեծապէս համոզուած ենք որ սուրբ ժողովքին Նախա  
 գահ Վարդինալը, իր նամակը՝ գրած ժամանակը ընկերութեան  
 հիմակուան վիճակին վրայ կատարեալ տեղեկութիւն չունէր,  
 և այս համոզումը նոյն իսկ իր թղթէն կ'առնենք ուր գրուած

1 Նախագահ Վարդինալին նամակին հայ  
 երէն թարգմանութեան օրինակը ամբող  
 ջապէս հօս կը գնենք, մէյմը՝ որ գործքիս ըն

թացքին մէջ անոր քանի մը հատուածները  
 յիշել հարկ եղաւ, ոչ եթէ անիկայ քննե  
 լու կամ պակասութիւն մը գտնալու հա



է, « Այս ընկերութիւնը անանկ անորոշ ու անասման նպատակ մը կը ցուցունէ, որ անզգոյշները քիչ քիչ ու առանց իր մանալու իրենց խղճմտանքին դատապարտած գործքերու ալ կրնան դիւրաւ ձգուիլ » ևն : Այս յօդուածը հարկաւ հին կանոնին վրայ հասկընալու է, ուր ազգին ամէն կերպով բարիք ընել գրուած էր որ կրնայ անորոշ երեւալ, իսկ հիմակուանը խիստ որոշ ու սահմանեալ է. այսինքն ուսումնական կերպով բարիք ընել, և այլն, (տես կանոն 1.) ուսկից կը հետեւի որ սուրբ ժողովքին դատումը ու արգելքը, միշտ հին կանոններուն վրայօք է որուն բարոյական մասը բողոքովին փոփոխուած է հիմա : Նմանապէս երկրորդ մասն ալ, այսինքն կառավարութեան Տէր Բաւան ապահովութիւն չի կայ ըսուիլն ալ հին կանոններուն վրայ հասկընալու է, որովհետեւ հիմակուան կանոններուն նկատմամբ մեծ ու յայտնի ապահովութիւն կայ ու կը գտնուի, որն որ երկայն չընելու համար կը խնդրենք մեր ընթերցողներէն որ, 1, 2, 3, 4, 6, 8, 14, 31, 40, և 41 կանոններուն ակնարկութիւն մը ընեն : Թող ազգային ժողովքին ուշադրութիւնը :

մար, քաւ լիցի, այլ ցուցունելու որ նախագահ կարգինալը ինչպէս հասկըցեր է ընկերութիւնը, որով և այն թուղթը գրելու պարտաւորեր է, և երկրորդ՝ ինչպէս միայն խրատական ու զգուշական թուղթ մը ըլլալով, ոմանց վճիռ, դատապարտութի ու նզովք ալ երեւցեր է :

« Տարածման Հաւատոյ Սուրբ Ժողովքին Գերատոհման ու Գերապատիւ կարգինալ Նախագահէն 1850 Մայիսի 28 կուտանդնուպօլսոյ Հայոց Նախագահ Եպիսկոպոսապետին Հասունեան Գերապայծառ Անտոն Վարդապետին խրկած թղթոյն թարգմանութիւնը » :

« Վերջի երեք տարուան ընթացքին մէջ, թէ Սրբազան Պապը և թէ Սուրբ Ժողովքը Համազգեաց անունով Պօլիս կանգնուած, ու ուրիշ տեղեր ալ Ռզղափառ Հայոց մէջ քանի մը փոփոխութիւնով վեր երեւցած ընկերութեան վրայօք զանազան ծանօթութիւններ առին, առ ծանօթութեանց փախճանը նոյն ընկերութեան վրայ հրահանգներ առնել էր : Հրամանքնիդ արթուն Հովուի մը պաշտօնը կատարելով, Չեզի յանձնուած հաւատացելոց առաջուց ծանուցիք այդպիսի ընկերութեան մը մօ-

տակայ վտանգները, ոչ ալ զանց ըրիք իմացունելու միանգամայն Սուրբ Ժողովքին ուսա գործքիս մէջ Ձեր բռնած ճամբան ու Ձեր յայտնած կարծիքը անորառջեւը դրնելով, անոր դատումը խնդրեցիք : Միանգամայն ընկերութեան գլխաւոր պաշտօնատարներէն քանի մը անդամք անգամէն աւելի Սրբազան Հօրը դիմեցին ու իրենց կանոններուն օրինակը խոնարհութեամբ աւոր ներկայացընելով վէճը եղած ընկերութեան վրայ օրհնութիւնը խնդրեցին :

« Աս զանազան առնուած տեղեկութեց կատարածը կրնար ծանրապէս խուճապել Սուրբ Ժողովքը Հայոց ազգին հոգեւոր աղեկութեանը նկատմամբ, բայց ՚ի սկզբան մինակ մասնաւոր նախազգուշութիւններ գործքի դրուեցան՝ որոնց վախճանը աւելի բուն իրաց վրայօք լիով ու ճիշդ ծանօթութիւններ առնել էր : Աս պաշտօնը մասնաւորապէս յանձնուեցաւ Սիդեոյ Արքեպիսկոպոսին Գերապայծառ Վինչենցիոս Ֆէրրիէրիին՝ որն որ Սրբազան Պապէն խրկուած էր իբր դեսպան Վեհանձն ինքնակալ Սուրբանին ու նոյն առթիւ ալ Առաքելական Այցելուի պատուաւոր պաշտօնը իրեն յանձնուած էր : Աս բաներուս վրայ եկան օղբալի դիպուածները՝ որով կրօնքի թշնամիները սկսան յարձակիլ անոր վրայ բուն իր

Նոյն նամակին մէջ կ'ըսուի. « Թէպէտև 1848 ին քանի մը  
 « Թեթեւ փոփոխուեց վրայ ճառուերէ, բայց նոյն բնաւորուիլը  
 « ու նոյն հոգին մնալուն համար ընկերուէ մէջ, նոյն հիմնական  
 « վտանգն ալ կը մնայ կոր » : Արդ եթէ Համազգեաց ընկերուէ  
 կանոններուն, տէրու թէ հրամանաւ, ազգային ու եկեղեցական  
 ժողովքի մը առջին մտադրութեամբ ու մէկիկ մէկիկ քննուե-  
 լուն, ու չէ թէ քանի մը Թեթեւ փոփոխութեանց վրայ ճառ-  
 ուիլ այլ պինտ երեւելի ու էական մասերուն բոլորովին Նախա-  
 դահ Հօրը ուզածին պէս փոփոխուելուն, ու գրոց քննութե-  
 կանոնին իր ձեռօքը շարադրուելուն սուրբ ժողովքը տեղեակ  
 ըլլար նէ, ինչպէս կրնար զանոնք Թեթեւ փոփոխութիւն համա-  
 ըիլ, և թէ ասոնք Թեթեւ են, ուր է ծանր մասը, կանոնին որ  
 կողմը որ յօդուածն է, ճշմարտասիրութեան փափաքով կը խնդ-  
 րենք որ մեղի ցուցունեն :

Նոյն թղթին մէջ կ'ըսուի ընկերութեան համար թէ ամէն իշ-  
 խան-խենէն ազաւ ըլլալը իր ջանայ, ասոր հակառակը Համազգեաց  
 ընկերութիւնը, ամէն կերպ իշխանութեան տակ, այսինքն թէ

կեդրոնին մէջ, ուր Գերագոյն Գահն է .  
 կարելի ալ չէր ասանկ դժուար պարագայ-  
 ներուն մէջ աս գործքիս պարագել այնու-  
 ծանրութեամբ՝ զոր նոյն ինքն գործքը կը  
 պահանջէր : Փոթորիկը դադարէն ետեւ՝ Սբ  
 Ժողովքը իր ընդմիջեալ ընդհանրական ժո-  
 ղովքները նորէն սկսելու կարող ըլլալուն  
 պէս, իմ Գերաստիճան Պաշտօնակիցներս  
 պէտք եղած մտադրութիւնը ըրին աս գործ-  
 քիս վերաբերեալ ամէն տեղեկութեանց  
 վրայ, ու Սրբազան Հայրերնիս ալ Սուրբ  
 Ժողովքին դատմունքը հաստատած ըլլա-  
 լով կը փութամ Ձեզի զանի հազորդելու :

« Սուրբ Ժողովքը Համազգեաց Ընկե-  
 րութեան վերաբերեալ բաները ու մասնա-  
 ւորապէս իրեն կանոնները, ու որչափ ալ  
 անոր փոփոխութիւններ մտցընել ուղուեր է  
 նէ ալ, այսու ամենայնիւ իրեն մէջ օրէ օր  
 աւելի յայտնուած հոգին ճիշտ քննութիւ  
 մտածելով պարտք դատեցաւ իրեն՝ Ձեր ար-  
 դէն յայտնած դատմունքին յարմարիլը ու  
 աս առաջիկայ թղթովս վերոյիշեալ Ընկե-  
 րութեան վրայ իր տհաճութիւնը ցուցնե-  
 լը, մասնաւորապէս վտանգներուն պատ-  
 ճառաւը որ Ռեզոլուիսիոն Հայոց հոգեւոր  
 ազգեկութեանը կրնան հոնկէց, առաջ գալ :

« Ու յերաւի աս ընկերութիւնը անանկ  
 անորոշ ու անահման նպատակ մը կը ցու-  
 ցընէ, որ անզգոյշները քիչ քիչ ու առանց  
 իմանալու իրենց խղճմտանքին դատապար-  
 տած գործքերու ալ կրնան դիւրաւ ձրգ-  
 ուիլ. աս բանս աւելի գիւրութեամբ կըր-  
 նայ հանդիպիլ, որովհետեւ իր կառավա-  
 րութեան մէջ աս բանս արգելելու բաւա-  
 կան ապահովութիւններ չի կան :

« Ռեզիլ ծանր վտանգ մ'ալ կ'երեւի որ  
 չըլլայ թէ աս Ընկերութիւնը՝ մինչուսկ հի-  
 մայ Աստուծոյ ողորմութեամբը Հայոց ազ-  
 գին մէջ պահուած ան հաստատուն բարե-  
 պաշտութեան ու քրիստոնէական կրթու-  
 թեան կորսուելուն ու զանի մոլորեցընող  
 սկզբունքներ մտնալու միջոց ըլլայ : Որով-  
 հետեւ հաւատքը Աստուծոյ ծանրագին  
 պարգեւն է պէտք է զանի նախանձով  
 պահել ու հեռուանցալ անոր մաքրութիւ-  
 նը մթնցընող ու փնասող ամէն պատճառ-  
 ները մէկ դի ընելու է : Ու թէպէտև  
 1848 ին քանի մը Թեթեւ փոփոխութեանց  
 վրայ ճառուեր է, բայց նոյն բնաւորու-  
 թիւնը՝ ու նոյն հոգին մնալուն համար Ըն-  
 կերութեան մէջ՝ նոյն հիմնական վտանգն  
 ալ կը մնայ կոր. որ չըլլայ թէ անոր պատ-

Եկեղեցական ու թէ աշխարհական իշխանութիւններէն ազատ  
չլլայէն ետեւ, մասնաւոր կերպով մըն ալ անոնց ազդեցութեց  
տակը ըլլալը իր զանազան կանոններէն յայտնի է, որն որ աւել  
ըորդ կ'ըլլայ հոս մէկիկ մէկիկ յիշել:

Ուստի սուրբ Ժողովքին Նախագահին նամակը անորոշ նպա-  
տակ ունեցող ամէն իշխանութենէ ազատ, մէջը գաղտնի վտանգ  
երեւցող, ընկերութիւն մը կը մերժէ, ու անկէց կ'զգուշացու-  
ցանէ, որն որ հնազանդելով, մենք ալ կը մերժենք, ու կ'զգու-  
շանանք, և ոչ թէ Համազգեաց ընկերութիւնը. որուն նպատա-  
կը յայտնի, եկեղեցական ու աշխարհական իշխանութեանց տակ,  
գաղտնի ու յայտնի վտանգներէ ազատած ընկերութիւն մը ըլլա-  
լուն տարակոյս չկայ:

Մ'նաց ճշմարտաւէր հեղանակին երկրորդ ու անյաղթելի առաջար-  
կութիւն՝ որ իրեն վրայ կրնանք դարձունել: Թէ որ Նախագահ  
Հայրը գիտէր ընկերութեան սրբազան Պապին դիմելով պատաս-  
խան սպասելը, նա մանաւանդ թէ ինչպէս որ Վսեմապատիւ  
Կարդինալը կ'ըսէ իր թղթին մէջ, «Նոյն ինքն Նախագահը սք

Ճառաւը Ուղղափառ կրօնի եղած սերտ  
սէրը երթալով տիրնայ, մանաւանդ որ  
դեռ ամէն իշխանութենէ ազատ ըլլալու  
կը ջանացուի, ու ասանկ ճամբայ կը բաց-  
ուի վերջապէս Բանաւորականաց Ազանդին  
հասնելու՝ որ ազգային բարութեան ու յա-  
ռաջագիմութեան պատրուակներովը՝ կրօն-  
քը կը փճացընէ: Չէ թէ Եկեղեցին գէմ  
կը կենայ ճշմարիտ բարութեան ու յառա-  
ջագիմութեան, որ ինչպէս յայտնի է, կը-  
րօնքի ուղիղ սկզբունքներուն հետ միշտ  
կից կ'երթայ, նա մանաւանդ որ՝ ինչպէս  
քաջայայտ է, Եկեղեցին՝ աս պայմանաւ  
միշտ ու ամէն տեղ անկից առաջ տարած  
է: Բայց ուրիշ այսչափ ազդերուն ողբալի  
դիպուածները յայտնապէս կը ցուցընեն թէ  
ի՛նչպէս աս անուններս շարաշար կը գոր-  
ծածուին. ուսկից ալ շատ գէշ հետեւու-  
թիւններ առաջ կուգան: Աս տարիներուս  
փորձն ալ կը հաստատէ՝ թէ սրչափ իրա-  
ւամբք կը վախցուի՝ որ ան վերայիշեալ ան-  
կարգութիւնները Հայոց Ուղղափառ Աղ-  
գին մէջն ալ հանդիպին, որոնք ալ աւելի  
ողբալի կրնան ըլլալ, թէ որ Ժամանակին  
յառաջատու թեամբք իրօք կատարուին նէ:  
Ընկերուէ ծագած բաները հրապարակապէս

ծանօթ են ազգին, ու բոլոր բարի ան-  
ձինք՝ որ բարեբաղդութեամբ ազգին մե-  
ծագոյն մասն են, անոնց վրայ կուլան. աս  
պատճառներուս համար ո՛վ որ սրտին մէջ  
կրօնքի ուղիղ սկզբանց փոյթն ու հոգը ու-  
նի, ապագային վրայ աղէտալի նախագու-  
շակութիւններ ընելու կը յատիպուի:

«Ուստի սուրբ Ժողովքը յիշուած Ըն-  
կերութեան որ և իցէ եղանակաւ կողմ  
բռնելը ու անոր ուղղակի կամ անուղղակի  
օգնելը թէ աշխարհական թէ կրօնաւոր  
Գղերին բացարձակ արդէլէլէն ՚ի զատ,  
Չեղ ալ կը փութացընէ որպէս զի Չեր իը-  
նամոցը յանձնուած հաւատացելոց այդպի-  
սի Ընկերութենէ ետ քաշուելուն պարա-  
պիք, ու ատալ ամէն փութով գործ դնել  
նուն բնաւ չ'երկբայիր. որովհետեւ համա-  
զուած է որ մեծ մասը միամտութեամբ գը-  
րուած է անոր, ու ատանց կարող ըլլալու  
առաջուց աղէկ մը իմանալու թէ ի՛նչ հե-  
տեւութիւններ ու պտուղներ կրնան ան-  
կից ծագել: Կը վստահի մանաւանդ թէ  
Կոստանդնուպոլսոյ Հայոց Ազգը ապագայ-  
ին համար իրեն կանոն ու օրինակ բռնե-  
լովքիչ տարիներէ առաջ իրեն դուխը ե-  
կած դիպուածները չի մոռնար. իրենց մէջ

« Ժողովքին ծանուցանելով առ գործքիս մէջ իր բռնած ճամբան  
 « ու իր կարծիքը անոր առջին յայտնելով անոր դատումը խնդ-  
 « րեր էր նէ » , ինչպէս այնչափ քահանայք մեծամեծք և ժողո-  
 վուրդը իր առջին և իր որոշմանը սպասած ատենը չի յայտնեց  
 և չի ծանոյց որ այս բանիս իրեն դատումը բաւական չէր , և թէ  
 եկեղեցւոյն որոշմանը սպասելու էր : Ա՞յլ պիտի դէմ կ'ենար ի-  
 րեն , ո՞վ պիտի չընդունէր եկեղեցւոյն որոշումը : Ըստ մեր կար-  
 ծեաց Վերապ . Նախագահը այս ամէն ծանր պարագայները ա-  
 ղէկ գիտնալով , մինչեւ որ սուրբ Ժողովքին հաճելի ըլլալուն ա-  
 պահովութիւն մը չունենար , պէտքը չէր որ ընդունիլ հրապա-  
 րակաւ ազգին ու տերութեան առջին , մանաւանդ որ չենք կրը-  
 նար ըսել որ Վերապ . Հասունեան Նախագահը չէր գիտէր ճշշ  
 ճարտասիրին առաջարկած իրաւաբանութեան օրէնքը , այսինքն թէ

աւելի տարօք եղողները աղէկ կը յիշեն ան  
 ամէն բաները , որով կը սարմին զգոյշ կե-  
 նալ ուր և իցէ ծածկուած վտանգներէն՝  
 որ կրնան զիրենք մոլորեցընել Ուղղափա-  
 ռութեան միութենէն՝ որուն մէջ մինչեւ  
 հիմայ՝ հաստատուն մնալու համար թէպէտ  
 ոչ զբեկանաց ու ոչ այնչափ նեղութեանց  
 խնայեցին , որն որ իրենց ազգին օգուան  
 ու փառքը եղաւ : Յիշելով ուրեմն որ թէ  
 պէտ և կրթութիւնը ըստ ինքեան մեզ  
 Աստուծոյ կ'առաջնորդէ ու մեզ կրօնի մէջ  
 կը հաստատէ , բայց շատ անգամ ալ գէշի  
 գործածուելով գլխովին ուրիշ վախճան  
 կ'ունենայ , անշուշտ իրենց պարտք մը պի-  
 տի սեպէն զանկից ստանալու . ուր որ Աս-  
 տուծմէ իրենց հոգեւոր բարութեան կար-  
 գած անձինք՝ անոր ուղղափառ կրօնի ըս-  
 կըզբանց համեմատ թէ հաւատոյ և թէ  
 բարի վարուց կողմանէ ողջամիտ ու մոլո-  
 րութեան ամէն վտանգէն ազատ ըլլալը  
 յայտնի ընեն : Ուստի Սուրբ Ժողովքն ալ  
 Հրամանոցը ուղիղ ու ճշմարիտ կրթութիւն  
 Ժողովուրդիդ մէջ առաջ տանելու յայտ-  
 նած ջանքը թէպէտեւ գովելու պարտա-  
 կան է . բայց միանգամայն պատշաճ ալ կը  
 դատի Ձեզ փութացուցանելու , ուղ զի յա-  
 րատեւէք ոչ միայն Հովուի պարտք եղած  
 հսկողութիւնը պահելու , այլ յաւէտ անի-  
 կայ տարածելու յարմար միջոցները շտոցը-  
 նելու . և բնաւ տարակոյս չի կայ՝ որ Հրա-  
 մանոցը հպատակ եղող երկաքանչիւր Գղե-  
 րին ալ Եկեղեցականները ամէն ջանքով Ձե-

ղի հետ առ նպատակիս գործակից ըլլան :  
 Աս ճամբով անզգոյշները խաբելու համար  
 ու անմարտը աղբիւրներէ թունաւոր վար-  
 գապետութիւններ ծրծելու զանոնք առաջ  
 նորդելու համար՝ Հայոց ազգին հոգեւոր  
 աղէկութեանը դէմ զինողներուն ամենե-  
 ւին պատճառանք չի մնար : Աերջապէս Ձեր  
 հօտին խնայեցնելու շղթայ թէ զանց ընէք ,  
 որ թէպէտ Աւետարանական օրէնքը մեզ  
 պիտի շարժէ ամէնուն սէր ցուցընելու , ու  
 թէ առ Աստուած աղօթքով , թէ առաքի-  
 նի վարուց օրինակաւ ու թէ պատշաճ յոր  
 գորանքներով ճամբէ ելած եղբարներնուս  
 Ուղղափառ կրօնի հետ միաբանութիւնը  
 դիւրինցընելու , այսու ամենայնիւ զգոյշ  
 կենալու է ան անձերէն , որ բոլորովին ու-  
 րիշ միտքի ծառայելով , ան մասերուն վը-  
 րայօք պայմանադրուէց զիջանել կը պահան-  
 ջեն , որոնց վրայ Եկեղեցին իրաւամբ միշտ  
 անդրդուելի կեցաւ . որովհետեւ ճշմար-  
 տութեան ու տոութեան մէջ միաբանու-  
 թիւն չի կրնար ըլլալ :

« Մինչեւ հիմա յայտնուած միտքն՝ են և  
 Սրբազան Հօրերնուս միտքն , որովհետեւ  
 ինչո՞ղ ՚ի սկզբան ալ Ձեզի ծանուցի , Սրբա-  
 զան Պատր Սուրբ Ժողովքին ան յայտնած  
 դատումը լիով հաստատել հաճեցաւ :

« Կ'աղաչեմ զԱստուած որ , և այլն » :

Յ . Փ . Կարսիալ Փռանսոնի Նախագահ

Ա . Պատնապօ սպէնտրպիր :

« Գառի մը բարձրագոյն աստեանին բողոքուելէն ետքը՝ միայն այն  
 » աստեանին վճռոյն բողոքովին յանձնուելու ու որոշմանը սպա-  
 » սելու է, այնպէս որ անոր վճռէն յառաջ ան դատին վրայօք  
 » ստորին աստեանէ եղած որպիսի և իցէ անօրինու մն իբր չեղած  
 » կը սեպուի » : Գայց այս բանիս վրայ մեզի Հռովմայի ճանապարհ-  
 հորդութիւնը ամէն խնդիր աղէկ կը լաւ ծէ, որուն եթէ ճշմարտա-  
 «էր անձն ալ համոզուիլ կ'ուզէ նէ, գիտնայ՝ որ իր դատաստանա-  
 կան ձեւը մեզի ալ քաջ ծանօթ է, բայց ընկերութիւնը աստեանի  
 ելլալով կամ դատաստան մը կրելով բնաւ Հռովմ ու սրբազան  
 Գահին բողոք չըրաւ, այլ ինչպէս վսեմապատիւ Վարդինալին նա-  
 մակը կ'ըսէ, « Գնկերուէ գլխաւոր պաշտօնատէրներէն քանի մը  
 » անդամք, անդամէն աւելի սրբազան Հօրը դիմեցին ու իրենց  
 » կանոններուն օրինակը խոնարհութեամբ անոր ներկայացընելով վէճը  
 » եղած ընկերութեան վրայ օրհնութիւնը խնդրեցին » : Աստի այն  
 իրաւաբանական կարգը թէպէտ շատ ստոյգ է, բայց մեր խընդ-  
 րոյն չի յարմարելուն, աս նիւթին մէջ աւելորդաբանութիւն կը  
 սեպուի : Թողունք որ, ընկերութեան հիմակուան կանոններուն  
 մէջ, թէ որ անկողմնասէր ղգուշութեամբ քննուելու որ ըլլան՝  
 այնչափ աստիճանութիւն ու վստահութիւն կը գտնուի, որ նաև  
 սուրբ Եղովբին առաջարկուելու ըլլան, հաճելի ու ընդունե-  
 լի երեւնալուն տարակոյս չունինք :

Հոս կը պարտաւորինք այս ամէն նիւթերուն վրայ մեր մէկ  
 քանի խորհրդածութիւններն ալ եւելցընելով, խօսքերնուս վերջ  
 տալ : Գուցէ ոմանց զարմանալի երեւայ որ ինչպէս յանձն կ'առ-  
 նենք պաշտպանելու ընկերութիւն մը, որն որ գլխաւորաբար  
 սուրբ Եղովբին նախագահը, յատուկ թղթով մը անընդունե-  
 լի կը համարի, և անոր անդամակցութիւնը եկեղեցականաց  
 մասնաւոր կերպով մը կ'արգիլէ . իրաւցընէ թէ որ վեր 'ի վերոյ  
 գատողութիւն մը ընելու ըլլանք, անհնարին բան մը կ'երեւայ  
 այս պաշտպանութիւնը . բայց թէ որ նիւթը խորունկցընելով  
 բանին էութեանը հասնինք, այն ժամանակը յայտնի կ'երեւայ  
 որ կրնանք եկեղեցւոյ կատարեալ հնադանդութիւն ընելով ըն-  
 կերութիւնը պաշտպանել և անոր մասնակից ըլլալ :

Նախ և առաջ ընկերութեան կանոնները անաչառ մտօք քըն-  
 նելով հաւատքի, սէրութեան և ազգին դէմ բնաւ բան մը չենք  
 կրնար գտնալ ոչ հեռաւոր և ոչ մերձաւոր : Յայսմ մասին մի-

այն մեր դատողութեանը չապաւինելով երեւելի եկեղեցական  
ու աշխարհական անձանց ալ հարցուցած և անոնց վկայութեամբ  
բըն ալ հաստատած ենք մեր դատողութիւնը, այսինքն հաւատա-  
քի, տէրութեան և ազգին դէմ բան մը չի գտնուելուն ստու-  
գութիւնը: Այն կողմանէ ասիկայ հաստատ գիտնալով և միւս կող-  
մանէ ալ սբ. Եղովբին նախագահին նամակը աչքերնուս առջին  
ունենալով որ ընկերութիւնը՝ «Ուղղափառ Հայոց հոգեւոր ա-  
» դէկութեանը վտանգաւոր» կը համարի. անկարելի կը թուի  
մեզի նոյն նամակը հիմակուան Համազգեաց ընկերութեան վրայ  
առնուլ: Ուստի եկեղեցւոյն հնազանդելով, կը հրաժարինք  
այնպիսի ընկերութենէ, որ «Մտորոչ ու անսահման նպատակ  
» մը ունի, որուն կառավարութեան մէջ բաւական ապահովու-  
» թիւն չի կայ, որ ամէն իշխանութենէ ազատ ըլլալու ջանալով  
» բանաւորականաց ազանդին հասնելու ճամբայ կը բանայ» և  
այն. այլ կ'ընդունինք և կը պաշտպանենք այնպիսի ընկերութի-  
մը, որուն նպատակը որոշ ու սահմանափակ է, որուն կառա-  
վարութեան մէջ մեծ ապահովութիւն կայ իր կանոններուն  
պահպանութեամբ. և որն որ հոգեւոր քննչութեան և աշխար-  
հական ազգային ժողովոյն ուշադրութեան տակ է: Այսպիսի  
երկու ընկերութեանց մէջ այնչափ տարբերութիւն կայ, որչափ  
որ լուսոյ ու խաւարի մէջ:

Ալ որովհետեւ սուրբ Եղովբը իր տհաճութիւնը ցուցու-  
նելով պատճառն ալ յայտնէր է, ու այն պատճառները ոչ մենք  
և ոչ ուրիշ անաչառ քննիչները Համազգեաց ընկերութեան մէջ  
կրցեր են գտնալու, ասկէց կը հետեւի որ ընկերուէ հակառա-  
կորդները առաւել իրենց կողմնակալ հակամիտութեւն քան թէ  
ճշմարտութեան անսալով սուրբ Եղովբին ուրիշ կերպ նկարա-  
գրեր են ընկերութիւնը քան ինչ որ է. ուստի յայտնի գուրցե-  
լու համար, չէ թէ սուրբ Եղովբին չենք հնազանդիր, չէ թէ  
ուղղափառութեան վտանգաւոր բանը, անորոչ և անսահման նը-  
պատակը, կառավարութեան մէջ ապահովութիւն չըլլալը, ամէն  
իշխանութենէ ազատ ըլլալու ջանալը, բանաւորականաց ազան-  
դին հասնելը և այլն, ազէկ ու գովելի բաներ են կ'ըսենք՝ քաւ լի-  
ցի, ասոնք եկեղեցւոյն ուղղախոհութեան և մեր խղճմտա-  
նաց ալ բողբոլին դէմ են. այլ այն ապօրինաւոր բաներուն բը-  
նաւ մէկն ալ Համազգեաց ընկերութեան մէջ չենք գտնար, և  
չենք կրնար գտնալ որչափ ալ մանրախոյզ զննութեամբ քննենք

ու գիտենք :

Ընկերութեան հակառակորդները կրնան ըսել արդեօք որ իրենց օտար նկարագրութիւն մը առած ատեննին ինքզինին ամենեւին հանդարտ էր և ճշմարտութեամբ կը վկայէին, ու ամենեւին կողմնակալութիւն չէին ընէր : Թէ որ կրնան ըսել, երանի անոնց, բայց թէ որ չի կրնան ըսել, իրենց այս կամաւոր մարդահաճութենէն յառաջ գալու անտեղութիւններուն դարձեալ իրենք պիտի պատասխանեն առաջի Աստուծոյ և մարդկան :

Այո՛ կրնան ճշմարտութիւնը ծածկելով ժամանակ մը, սուրբ Երկրի վրայ զայրացնել, ժողովրդեան մէկ մասը համոզել, և ընկերութեան յառաջադիմութեանը արդէք ըլլալ ու խափանել, բայց ինչպէս ամենայն ճշմարտութիւն, նոյնպէս ընկերութեան սկզբունքն ալ այսպիսի պատահական արկածներէն անվնաս մընալով, կուգայ կը հասնի այն ժամանակը, որուն մէջ սբ Երկրի վրայ բուն ստուգութեան բանին տեղեակ կ'ըլլայ անժխտելի ապացուցով, ժողովուրդը աչքը կը բանայ և ընկերութիւնը իր ամէն պայծառութեամբը վերստին կը փայլի իր ազդօգուտ գործողութիւններով :

Արկորդ, ընկերութեան ինչ փախճանաւ քահանայից ու ազգին մէջմէկ մասին ընդունելի չըլլալուն բուն և իսկական պատճառը վերը յայտնած ըլլալովս, աղէկ գիտենք քանի որ նոյն պատճառը ազգին մէջ կը մնայ, հաստատ և տեւողական խաղաղութիւն մը տեսնալը անհնարին է. եթէ կանոնն թիւր իցէ քանի՞ առաւել ոչք ուղղին նովաւ կ'ըսէ առածը : Աւ արդարեւ պէտք էր մեզի որ մեզ հոգեւորապէս կառավարող եկեղեցականաց անմիաբանութեանը աչատես և ականջալուր վկայ ըլլայինք : Պէտք էր մեզի որ եկեղեցականաց մէկ մասին միւս մասին վրայ ըրած փոփոխակի ամբաստանութիւնները լսէինք ու դատէինք. պէտք էր մեզի որ հոգեւորական ու հայրախնամ իշխաւ նութիւնը պատժոյ գաւազանը ձեռքը առած տեսնայինք : Վերջապէս պէտք էր արդեօք մեզի եկեղեցականաց մէջ խտրութիւն ընելու պարտաւորիլ այս կամ այն կողման վերաբերելուն համար : Բայց աւանդ, ասոնք ան տխուր ճշմարտութիւններն են, որոնք ծածկելու ջանալը անկարելի ջանալ է : Աւ երբ եկեղեցականք այսպիսի դառն վիճակի մէջ կը ծփան, և այսպիսի ծանր երկպառակութեանց տակ կը հեծեն, ընդունայն ու անօգուտ է բծախնդրութիւն ընելով ժողովուրդը գրգռել և իրարու հա-

կառակ յարուցանել, կրօնքի և ուղղափառութեանը վտանգի մէջ ըլլալը պատճառելով: Արօնքը ոչ եթէ այսպիսի եղբայրսիրական ու ազգօգուտ ձեռնարկութեամբ մը վտանգի մէջ կ'իյնայ, այլ իրեն պաշտօնեայներուն իրարու ըրած հակառակութեամբ, և անկէ ժողովրդեան տուած գայթակղութեամբը, որուն անկարելի է որ ժողովուրդը մասնակից չըլլայ: Ազգին ճշմարիտ բարեացը ցանկացող անձ մը, արդեօք ինչե՞ր կը գտնայ առանց ժամանակ կորսնցընելու ու անմիջապէս ուղղելու արժանի, որոնք իսկապէս ազգին ուղղափառութեամբ յառաջագիմունք արդեւք ըլլալու բաներ են. և որոնց համար բոլորովին անհոգ կենալով, միայն Համադպեաց ընկերութեան հեռաւոր վտանգները կը տեսնուին. ըսքանչելի կանխատեսութիւն:

Հոս խօսքիս վերջ տալով ճշմարիտ ու անկեղծ ազգասիրութեանէ շարժած կը համարձակիմ քանի մը ազգարարութիւններ ընել ազգին ընդհանրութեանը: Անձ և փոքր եկեղեցականք, դուք որ ժողովուրդը հոգեւորապէս կառավարելով արդէն սուկալի սրատասխանատուութեան մը տակ էք, աղէկ մտածեցէք ասանկ ծանր նիւթի մը վրայ, որուն հետ անշուշտ կասկածութիւն ունի ազգին ասրագայ հոգեւորական աղէկութիւնը կամ գէշութիւնը. և մի կարծէք թէ թեթեւ բան մը ըլլայ ասիկայ. թէ որ քիչ մը սխալիք, քիչ մը ակնառութիւն կամ կողմնակցութիւն ընէք, մեծամեծ հետեւանքներ պիտի ունենայ ետքը: Խորհեցէք միշտ որ անհնարին է ճշմարտութեան հետ մաքառիլ որչափ ալ ամրապէս զինեալ ըլլաք. փնտրուեցէք բուն ճշմարտութիւնը և բանիւ ու գործով պաշտպանեցէք զայն միակամ և միասիրտ:

Ազգապետք և մեծամեծք, դուք որ ձեր բարձր աստիճանաւը, ազգին խնամք ու պաշտպանութիւն ընելու վիճակեալ էք, ձեր հեղինակութիւնը, կարողութիւնը, ու միջոցները ազգին իսկապէս բարւոյն գործածելու պարտաւոր էք: Ինչաւ մասնակից ու կողմնակից չըլլալով այնպիսի երկպառակութեանց, որոնք ազգին մէջ մեծամեծ վնասներու պատճառ կրնան ըլլալ. դուք ձեր ազգեցութեամբը պիտի արդարութիւնը պաշտպանէք, եւ պիտի թող չի տաք որ անիրաւութիւնը իրաւանց յաղթէ:

Աւ դուք ժողովուրդք, այսինքն հարբ և եղբարբ և զաւակունք. դուք որ մէկ կամ միւս կողման վերաբերելով բարոյապէս իրար կը պատառէք. չըսեմ դուք ամէնքնիդ, բայց մէ-



ջերնէդ շատերը , գիտէք կամ հասկըցած էք ինչ որ կ'ընդունիք  
և ինչ որ չէք ընդունիր , առջեւնիդ առած քննած էք , և ձեր  
բանական դատողութեամբը կ'ընդունիք կամ կը մերժէք . եթէ ա-  
մենեւին բանի մը տեղեակ չըլլալով , տգիտութեամբ կողմնակ-  
ցութեան մը գործիք եղած էք , և անոր շարժմանը կը հետե-  
ւիք կուրօրէն . սակից բողոքովին օգուտ մը չելլելով ձեզի մե-  
ծամեծ մնասներ ալ կրնան հետեւիլ :

Ա՛յլ պիտի վայելէ բարեկարգ ընկերութեան մը պտուղը , ու-  
րո՞ւն պիտի ուսումնական աղէկութիւն ըլլայ . որո՞ւն տղաքը պի-  
տի ձրի կրթութիւն դպրատանց մէջ , ամէնն ալ ազգին ու ժողո-  
վըրդեան համար է : Իսկ ընդհակառակն թէ որ ընկերութիւնը  
կործանի , միայն կողմնակցութիւն մը պիտի պարծենայ իր խօս-  
քը յառաջ երթալուն համար . և ազգը զուրկ պիտի մնայ այն-  
չափ բարիքներէն , որն որ կը խոստանայ ընկերութիւնը : Ասկէց  
ետքը , կիրքը , հակառակութիւնը ու տգիտութիւնը մէկ դի-  
թողլով , աղէկ մտածեցէք ձեր իսկապէս բարւոյն վրայ , որ է  
ճշմարիտ ազգասիրութիւն :

Ի Կոստանդնուպօլիս  
10 Փետրւարի 1851 :

ՂԵՄԻՏԻՍ ԳՐԻԳՈՐԻԱՆ :

Կ Ա Ն Ո Ն Ե Գ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Հ Ա Մ Ա Չ Գ Ե Ա Յ Բ Ն Կ Ե Բ Ո Ւ Թ Ե Ա Ն

Կ Ա Ն Ո Ն Ա

1. Հ Ա Մ Ա Չ Գ Ե Ա Յ Բ Ն Կ Ե Բ Ո Ւ Թ Ե Ա Ն նպատակը ազգին բարիքը ներէ . ուսումնական կրթութեան ու գրականութեան և օգտակար գիտութեանց վերաբերեալ միջոցները տարածելով . ու իր ծախիւքը վարժարաններ ու դպրոցներ հաստատելով :

Բ .

2. Հ ա ու վ մ է ա կ ա ն չ ե ղ ո ղ Հ ա յ երը չի կարենան անդամ գրուիլ այս Բ ն կ ե բ ու թ ե ա ն :

Գ .

3. Հ ա մ ա ղ գ ե ա յ Բ ն կ ե բ ու թ ե ա ն անդամ գրուողը կը պարտաւորի նախ կանոնները ընդունիլ , ու հաստատ պահելու դաշամբ ստորագրել կանոնադրութեանց գրքին մէջ , ՚ի նշան թէ ինքը փափաքելով ազգին յառաջագիտութեանը , կը հպատակի ամենայն սահմանեալ օրինադրութեանց . և երկրորդ իբրև իրաւունք անդամակցութեան՝ մէկ բաժնոյ մը համար կանխիկ տասը դահեկան վճարելու . անկէ վերջը հինգ հինգ դահեկան տալ ամսէ ամիս , ազատ ըլլալով ուղածին չափ բաժին գրուելու :

Դ .

4. Հ ա մ ա ղ գ ե ա յ Բ ն կ ե բ ու թ ե ա ն վարժարաններուն ու դպրոցներուն մէջի վարդապետուիլը պիտի ըլլայ կաթողիկէ Հ ա ու վ մ է ա կ ա ն Ա լ զ ղ ա փ ա ու հ աւ ա ս ր ք :

Ե .

5. Ա վ ո Ր երեք ամիս առանց բանական պատճառի մը կ'ու-

չացրնէ իւր բաժնին ստակը , այն կը համարուի Մեկերու թեանէն  
բաժնուած , անոր համար և ոչ կրնայ անկէ ետեւ ժողովք գալ  
և ոչ Մեկերու թեան բարեացը հաղորդ գտանիլ :

Զ.

6. Այս Մեկերու թեան մէջ առանձին մարդու մը կարծիք ոչ  
կը սահմանուի և ոչ ալ կը գործադրուի , որովհետեւ ամեն  
հաստատութիւն մեծագոյն մասին հաւանութեամբը պիտի ըլ-  
լայ . ուստի ինչ և իցէ առաջարկութե մը որոշմանը թէ որ առ-  
բաժայնութիւն մը ելլայ նէ , քուէարկութիւն ըլլայ , և ներկայ  
գտնուող բազմութեան երեք մասին երկուքը ինչուան որ չելէ՝  
անորոշ և անգործադրելի մնայ խնդիրը . իսկ թէ որ նոյն թիւը  
ելլայ , անկէ վերջը և ոչ մէկ մարդ մը կարող ըլլայ անոր վրայ  
վէճ հանելու . բայց աս քուէարկութեան կանոնը , մէկ ժամա-  
նակ մըն ալ կարող չըլլայ , 1 . 3 . 4 . 11 , և 35 երոգդ կանոնները  
խափանալու կամ ջնջելու :

Է.

7. Թէ որ մէկը ուզենայ ժողովքին առաջարկել մէկ նոր  
խնդիր մը կամ տարակոյս մը , կամ թէ մէկը ուզենայ տեղոհու-  
թեան պատճառ մը յայտնել , չի կարենայ ամենուն առջին բա-  
ցարձակ զրուցելու . այլ գրէ զնոյնը թղթի վրայ իր նշանովը , ու  
ձգէ ժողովարանը գտնուած ամբափակ սնտկին մէջ . զորն որ բա-  
նան տեսուչները , ու թէ որ պատշաճ դատեն , առաջարկեն ժո-  
ղովքին , որ քննուի կամ քուէով որոշուի :

Ը.

8. Քահանայք ալ իբրեւ աշխարհական կարենան անդամ գը-  
րուիլ այս Մեկերու թեան . բայց պաշտօնի մէջ չորս խորհրդական  
և երկու խաղաղարարէն եւել չի կարենան ըլլալ : ( պէս կանոն 13  
և 39 ) :

Թ.

9. Կրնան տիկնայք ալ անդամ գրուիլ Մեկերու թեան , որոնց  
չարադրածը կամ թարգմանածն ալ թէ որ պատշաճ դատի Մե-  
կերութիւնը , տպուի հասարակաց ստակովը . բայց ոչ երբէք կա-  
րենան ժողովք գալ և պաշտօնի մանել :

Ժ.

10. ( ) Ժանդակ ըսուած անդամակիցները ազատ ըլլան գալուկամ չի գալու ժողովքին :

ԺԱ.

11. Թէ որ մէկը կամ շատոնք ինչ և իցէ պատճառաւ ինքնակամ հրաժարին կամ մերժուին Մեկերութենէն , չունենան իրաւունք ոչ իրենց տուած ստակը ետ առնելու , և ոչ ալ իրենց աշխատանացը համար Մեկերութենէն փոխարէն մը պահանջելու :

ԺԲ.

12. Համազգեաց Մեկերութեան պաշտօնատէրները պիտի ըլլան հաւասար իշխանութեամբ , երէք Տեսուչ , նոյնպէս տասնուերկու խաղաղարար , քսան և չորս խորհրդական , երկու Վտենագրպիր , հինգ Վանձապետ , չորս Քուէակալ և ասոնցմէ ՚ի զատ հարկաւոր ծառայներ :

ԺԳ.

13. Մեն պաշտօնատեարց իշխանութեան ժամանակը տարի մը տեւէ . բայց բանական պատճառաւ մը անկէ առաջ ալ պաշտօնէ կրնան ձգուիլ . և տարին լրմննալէն ետեւ կը փոխուին և կամ նորէն կը հաստատուին , թէ որ յետագայ տարուան քուէարկութեամբն ալ ընտրուելու ըլլան :

ԺԴ.

14. Տեսուչները պիտի ըլլան խոնարհամիտք , և իրենց վարքերնուն և խօսքերնուն մէջ արհամարհանաց նշան մը պիտի չերեւայ , բարկութեան խօսք ամենեւին չըլլայ իրենց բերանը . Մեկերութեան այնպիսի զգուշանայ այս բանէս , որ եթէ տեսուչ մը երկու կամ երեք անգամ բարկութեան կամ արհամարհանաց նշան մը ցրցունէ , թէ ժողովքի մէջ և թէ առանձին ընկերացը հետ , տեսուչութենէն ձգուի այնպիսին , որպէս զի կառավարչաց գէշ վարքովը Մեկերութիւնը չաւրուի :

ԺԵ.

15. Տեսուչներուն պարտքն է ժողովքին գլուխ ըլլալ , ու առաջարկել խորհելու կամ գործադրուելու կարեւոր բաները , և

նախ իրենք խնդրոյ մը մեկնութիւնը տան , և վերջը ժողովքին մէջէն սմանց հարցընեն՝ զորոնք որ կը ճանաչեն այն բանին տեղեակ :

ԺԶ.

16. Նմանապէս տեսուչներուն պարտքն է , մէկալ պաշտօնատէրներուն գործքերը դիտել , հարցընելով իմանալ , և ինչ ուղղութեան գործ մը տեսնեն , ժողովքին առաջարկեն որ քննեն և ուղղեն :

ԺԷ.

17. Տեսուչները չունենան իրաւունք մէկալ պաշտօնատէրներուն հրամայելու :

ԺԸ.

18. Այն առաջարկութիւնը որ տեսուչները ժողովքին պիտի ընեն , նախ իրենց մէջը ընդունին , ու թէ որ առաջարկութիւն մը աւելորդ համարին , զայն դուրս ձգեն . բայց թէ որ մէջերնէն մէկը կարեւոր համարի , պէտք է որ առաջարկեն ժողովքին :

ԺԹ.

19. Թէ որ տեսուչները չուզենան խնդիրք մը առաջարկել ժողովքին՝ երեքն ալ միաբան , և խաղաղարարներուն բողոք ըլլալով , անոնք ալ եթէ չի կարենան զտեսուչները համոզել խնդիրը առաջարկելու , այնպիսի դիպուածի մէջ՝ որ տեսուչները բաղմութե կը հակառակին , ու չեն թողուր որ խնդիրը առաջարկուի , այն ժամանակը տասնուերկու խաղաղարարները միաբանին , բողոք ընեն ժողովքին , որ քուէարկութեամբ որոշուի նոյն խնդրոյն առաջարկուիլը կամ ետ ձգուիլը :

Ի.

20. Գոնէ տեսուչներուն երկուքը գտնուին ամեն ժողովքի մէջ :

ԻԱ.

21. Թէ որ տեսուչները խնդրոյ մը վրայ ուզեն որ քուէ ձըգուի , ու թէ որ ժողովքին մէջ գտնուող անդամներէն տասնուերկու հոգի ուզենան ուրիշ օրուան ձգել քուէարկութիւնը

ձայն տան որ ուրիշ օրուան ձգուի խնդիրը, որպէս զի նորէն քրն-  
նուի. բայց այս տասնու երկու քներուն բողոքը իւրաքանչիւր խըն-  
դրոյ մը մէկ անգամ կարենայ զօրել. ուրիշ բան է՝ թէ որ տե-  
սու չները ու զենան երկարաձգել, և կամ խաղաղարարներէն վեց  
հոգի միաբանած :

Ի Բ .

22 . Անդամակիցներէն մէկը որչափ որ վար մարդ ըլլայ, իրա-  
ւունք ունենայ տեսուչներուն և կամ ժողովքին կարծիք մը ը-  
սելու, ըստ եօթներորդ կանոնի. որպէս զի առանց արհամար-  
հելու մտիկ ըլլուի այն մարդուն կարծիքը :

Ի Գ .

23 . Խաղաղարարներուն գործքն է, տեսուչներուն և ուրիշ  
պաշտօնատէրներուն ու բոլոր ընկերացը մէջ խաղաղութիւն պա-  
հել, անոր համար թէ որ մէկը թէ պաշտօնատեարց և թէ ան-  
դամակցաց վրայ մէկ ահաճութիւն մը ունենայ նէ, պէտք չէ որ  
բացարձակ ամենուն առջին զրուցէ. այլ երթայ ծանուցանէ  
խաղաղարարներէն մէկուն առանձին, որպէս զի ասանկով խա-  
ղաղարարները իմանալով քննեն մէջերնին իրը, և յորդորեն եր-  
կու կողմը խաղաղութեան. իսկ թէ որ չի կարենան համոզել,  
ժողովքին առաջարկեն, որպէս զի քննուի. ու թէ որ դժուա-  
րանայ քուէ ձգուի :

Ի Դ .

24 . Խորհրդականաց պարտքն է ամեն ժողովքին գտնուիլ,  
ու առաջարկուած նիւթերը քննել ու վիճաբանել. պաշտօնա-  
տէր չեղող անդամները կարող չեն խօսքի խառնուիլ, որպէս զի  
բազմութեան պատճառաւ խառնակութիւն չըլլայ :

Ի Ե .

25 . Թէ որ խորհրդականներէն մէկը, երբեմն կարևոր պատ-  
ճառաւ չի կարենայ ժողովք գալ, պարտական է իւր տեղը անդա-  
մակիցներէն զուրիշ մը խրկելու, զայն որ կը ճանչնայ յարմար իւր  
տեղը բռնելու ժողովքին մէջ. իսկ թէ որ ինքը չի գայ, և կամ  
զուրիշ մը չի խաւրէ իւր տեղը, այն խորհրդականուէ ձգուի, և  
միայն ընկեր անդամակից ըլլայ :

Ի Զ .

26 . Ժողովքի մէջ սրոշուած անձինքը ինչուան որ ամենքը չի գտնուին խորհուրդ մը չի սահմանուի . և թիւը լրանալուն ինչ խորհուրդ որ խորհին ու սահմանեն , այն ըլլայ ամբողջ Մկերութեան կամքը , և ոչ մեծամեծներէն և կամ պզտիկներէն մէկը կարող ըլլայ դէմ կենալու . ու թէ որ մէկը դէմ կենալով չի դադրի իրեն հակառակութենէն , զայնպիսին դուրս հանէ Մկերութիւնը իր անդամակցութենէն :

Ի Ե .

27 . Մտենադարաց առաջին պարտքն է , ժողովքին մէջ խօսուած նիւթերը նշանակել , և երկրորդ գումարման մէջ կարդալ , և Մկերութեան մատենին մէջ անցընել . երկրորդ պարտքն է , թուղթ գրել և պատասխանել թղթոց՝ Մկերութեան կողմանէ . երրորդ տոմսակ խրկել հարկ եղած օրերը , որուն որ պէտք է նէ , տեսուչներէն տեղեկանալով ամեն մէկ անգամուն իւրաքանչիւր խորհրդոց նիւթերը :

Ի Ը .

28 . Վանձապետները պէտք է որ ունենան օրագիր տետրակներ՝ որոնց մէջ ընկեր գրուողներուն անուններովը , իւրաքանչիւր ամսոց հատուցմունքները նշանակեն , և վերջը Մկերութեան տօմարին մէջ անցընեն :

Ի Թ .

29 . Վանձապետները հաշուետումար ալ ունենան , որուն մէջ նշանակեն Մկերութեան ստակներուն մուտքը ու ելքը , բացայայտ և ճշգիւ :

Լ .

30 . Վանձապետները հասարակաց գանձէն ստակ առնելու ատեննին ամենքն ալ մէկ տեղ պիտի գտնուին , և ստակը ընդունելէն վերջը մէկ տեղ պիտի ստորագրեն հաշուետումարին մէջ :

Լ Ա .

31 . Եթէ քննիչ գրոց պիտի ըլլայ , հինգը քահանայ և երկուքը աշխարհական : Եկեղեցական քննիչներուն պարտքն է ,

Մեկերու թեանէ տպուելու գրքերուն կամ Մեկերու թեան առջին կարգացուելու ճառերուն քննութիւնը ընել . Մեկերու թիւնը հոս գանուածներէն քսան և հինգ քհնայ , այսինքն հինգ հինգ քահանայ ամեն մէկ միաբանութեանէն , հինգ թեմական աշխարհական քահանայներէն , հինգ Վիքտորիոս կաթողիկոսարանէն , հինգ Վենետիկու , հինգ Վիեննայի և հինգ Վիքանանու Մետոնեան միաբաններէն , առաջարկէ Վենապատիւ Նախագահ եպիսկոպոսին , որ անոնցմէ պատշաճ տեսած հինգ անձինք (այսինքն իւրաքանչիւր կարգէն մէկ քահանայ) ընտրէ , վերոյիշեալ գրուածոց մէջ հաւատոց և բարոյական մասը միաբան քննելու համար . որոնք և զգոյշ ըլլան միշտ իր օրինաւոր իշխանութեանը հպատակութիւն վարուելու : Դարձեալ նոյն Նախագահ Տէրը որ միշտ ազատ է իրեն հոգեւոր պաշտօնին կամ կրօնից վերաբերեալ բաներուն գործածութեան մէջ , այս ընտրուած անձինքներէն , տեղահոսութիւն մը ունենայ նէ , կարող է փոխել առանց պատճառը իմացընելու , նոյնպէս Մեկերու թիւնը կարող է այս ընտրուած անձանց փոփոխութիւնը պահանջելու , պատճառը յայտնելով և Նախագահ Տէրը համոզելով : Անկալ երկու աշխարհական քննիչները Մեկերու թիւնը քուէով պիտի ընտրէ , որոնք տէրութեան ընդունելի անձինք պիտի ըլլան , ու որոնց պարտքն է դիտել , որ վերոյիշեալ գրուածոց մէջ տէրութեան ու աղգային իրաւանց դէմ բան մը չըլլայ :

ԼԲ .

32 . Մեկերու թիւնը պիտի ունենայ չորս քուէակալ պաշտօնատէր , որպէս զի երբոր տեսուչները քուէարկութեան նշան կուտան , մէջերնէն մէկը ժողովականաց թուոյն համեմատ տեսուչներէն վիճակ առնէ , և մէյմէկ հատ բաժնէ , և երկրորդը անոր ետեւէն երթալով , տուփը պտըտցընէ . ու երբոր լըմընայ քուէարկութիւնը , երրորդը ու չորրորդը մէջ տեղ գան , տուփին խորշերը հանեն , և մէկ մէկէ հեռու պարպեն , երկուքը մէկ կողմանէ և երկուքը մէկալ կողմանէ համրեն վիճակները և բարձր ձայնով ըսեն Մեկերու թեան կամքը . թէ որ շփոթութիւն մը ըլլայ նէ գործողութեան մէջ , չի սեպիլն այն քուէարկութիւնը , այլ նորէն ձգուի և լըմնալէն վերջը տուփը յանձնուի տեսուչներուն :



ԼԳ.

33. Ասու մնական արուեստական և ուրիշ նիւթական ըստացուածոց վերաբերեալ ինչ որ կը գնէ Մնկերութիւնը, ամենըն ալ Մնկերութեան մնան և ոչ ոք կարենայ անոնցմէ մէկը իրեն սեփականել:

ԼԴ.

34. Մնկերութիւնը ինչ որ ծախք ընէ՝ ստրկին շահէն միայն կարենայ ընել, ստրկին գլխուն երբէք չի պիտի գպչուի:

ԼԵ.

35. Հինգ տաղաւարաց տօներուն ըլլայ ընդ հանուր ժողովք, և ըստ կարի ամենայն անդամակիցք գտնուին, եւս առաւել Օլատկին ու Յայտնութեան տօներուն, որոնց մէջ ըլլայ ամենահարկաւոր խնդրոց որոշմունքը, կամ թէ նոր կանոն մը ելլել ցընել քուէարկութեամբ ըստ վեցերորդ կանոնի:

ԼԶ.

36. Ուրիշ քաղաքներէն թէ որ մէկը ուզենայ Մնկերութեան անդամ գրուիլ, պէտք է որ Մնկերութիւնը ընդունի զանիկայ, և կանոններուն օրինակը խրկէ անոր. նոյն քաղաքները ժողոված անդամակիցներն ալ, իրենց գործքերուն և ստակներուն համարը պիտի տան Համագգեաց Մնկերութեանը, որ պիտի խրկէ նաեւ կարեւոր անձինք վարժարաններ ու դպրոցներ բանալու. և այսպէս որոնք որ հայրենասիրութեամբ կը փափաքին Համագգեաց Մնկերութեան անդամ գրուիլ և տեղւոյն հեռաւորութեանը պատճառաւ չեն կրնար գալ ու ստորագրել կանոնները, կրնան յանձնել իրենց բարեկամացը, որ անոնց կողմանէ փոխանակաբար կը ստորագրեն կանոններուն գրքին մէջ:

ԼԷ.

37. Մնկերութեան անդամները կարենան հիւր բերելու Մնկերութեան ժողովարանը, բայց պէտք է որ հիւրերը իրենց համար սահմանուած տեղը կենան, և չխառնուին ժողովքին հասփին կամ գործքին:

ԼԸ.

38. Տեղէ մը թէ որ նամակ մը գայ այս Մնկերութեան,

յանձնուի տեսուչներուն, որ ժողովքին մէջը բանալով կարգան, և պատշաճ պատասխանը որոշուած յանձնուի ատենագարաց, և վերջը նորէն ժողովքին կարգալով, տեսուչները ստորագրեն կրնաքեն և խրկեն:

ԼԹ.

39. Հաբաթական ժողովներուն մէջ երկու տեսուչ, տասը խորհրդական և հինգ խաղաղարար գանուելով ժողովքը կատարեալ սեպուի. նոյն շաբաթական ժողովքներուն մէջ, տասը աշխարհական խորհրդական և հինգ խաղաղարար գանուի նէ, միայն երկու քահանայ խորհրդական և մէկ քահանայ խաղաղարար կարենայ գանուիլ. և քսան աշխարհական խորհրդական և տասը աշխարհական խաղաղարար ըլլայ նէ, չորսը քահանայ խորհրդական և երկուքը քահանայ խաղաղարար կարենայ ըլլալ. նոյն ժողովքներուն այս թիւէն եւել քահանայ պաշտօնատէր գայ նէ իբրեւ պարզ անդամ պիտի սեպուի:

Խ.

40. Մեկերու թեան վերաբերեալ ինչ և իցէ գրուածք մը, որ և իցէ անդամ հրատարակելու համար թէ ձեռագիր և թէ տըպեալ, Մեկերու թեանէ քննուի և հաւանութիւն առնուի. այս որոշմանս գէմ ընողին պէտք եղած քննութիւնը կամ պատիժը ՚ի գործ գրուի խորհրդոյն կողմանէ:

ԽԱ.

41. Այս Մեկերու թիւ միայն Հռովմէական Հայոց ընկերութիւն մը պիտի ըլլայ. և իր անդամակիցները պիտի ըլլան Օսմանեան տէրութեան հայատակ անձինք, ու եթէ մէկը հայատակութենէն ելնէ, Մեկերու թիւնը պիտի հանէ զանի իր անդամակցութենէն:

---

Բարձրագոյն Ղրանք հրամանաւ, առ աջին թարգման վսեմապատիւ Ամին Աֆէնտիին 1848 Յունիսի 28 և թահրիրաթ միւլաբի վսեմապատիւ Սախա Աֆէնտիին 1848 Յունիսի 6, և ստորագրելոց ներկայութեամբը Պատրիարքարանը եղած երկու ազգային ժողովքէն քննուելէն ետեւ ընդունուած կանոններուն ճիշդ օրինակը ըլլալուն, և նոյն կանոնները բացառեալ այս Հա

մազգեսաց Տնկերուէր մէջ՝ տէրութեան, ազգին, և կրօնից վերաբերեալ նիւթերը, արքունի հրամանաւ հաստատուելու ազգային աշխարհական ժողովքին ուշադրութեանը յանձնուած ըլլալուն կը վկայենք մեք ստորագրեալքս :

Անտոն Արամեան :

Ա. Արմէնեան :

Գասպար Անաստեան :

Խաչատուր Գաղէղեանց :

Կարապետ Թիւղէնպճեան :

Անաս Գասմաճեանց :

Միսայէլ Ապուլլազեան :

Միրախ Սամանճեան :

Յակոբ Տաճրեանց :

Յովսէփ Վարդանեանց :

Սարգիս Անիբեան :

*(Handwritten note in Armenian script)*




... die ... ..  
... ..  
... ..  
... ..

U. ... ..  
U. ... ..  
G. ... ..  
G. ... ..  
U. ... ..


... ..  
... ..  
... ..  
... ..  
... ..













Handwritten notes in the bottom right corner, including the characters "f", "a", "o", "f", "n", and "m".

